Co-funded by
the European Union

YOUTH INITIATIVE CENTRE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՐԱԿԻ, ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Հայաստանի Ծիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի բնապահպանական խնդիրների երիտասարդական քաղաքացիական մոնիթորինգ

Մոնիթորինգը իրականացվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ «EmpowerYouth. Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում» Էրազմուս+ ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

2026

Մոնիթորինգի համայնքներ՝



Համայնքային մոնիթորինգի զեկույցներ՝

- Արթիկի անտառային գոտու աղբահանության խնդիրը
  Արթիկ, Շիրակի մարզ
- Շիրակի մարզի անտառածածկ տարածքները
  Գյումրի, Շիրակի մարզ
- Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումը և պահպանումը
  Արմավիր, Արմավիրի մարզ
- Օդի աղտոտվածությունը Վաղարշապատ համայնքում
  Վաղարշապատ, Արմավիրի մարզ
- Գավառում պլաստիկի սպառում և սննդի թափոնների մշակում
  Գավառ, Գեղարքունիքի մարզ

Հեղինակներ

Հետազոտական մենթոր՝
Արթուր Զաքարէ Հարությունյան

Զեկույցների հեղինակներ՝

Արթիկի անտառային գոտու աղբահանության խնդիրը
Մարինա Մաթևոսյան
Կարինե Հարությունյան
Ռուբեն Քերոբյան

Մենթոր՝ Շուշան Թորոսյան

Շիրակի մարզի անտառածածկ տարածքները
Ասյա Հարությունյան
Խաչատուր Մարտիրոսյան
Էլեն Հովհաննիսյան

Մենթոր՝ Տաթևիկ Սերոբյան

Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումը և պահպանումը
Լիլիա Դավթյան
Ռիմա Տոնյան
Արմեն Սաֆարյան

Մենթոր՝ Լիլիթ Գևորգյան

Օդի աղտոտվածությունը Վաղարշապատ համայնքում
Լիլիթ Ներսեսյան
Էլմիրա Նիկողոսյան
Սոֆյա Մկրտչյան

Մենթոր՝Հռիփսիմե Ավչյան

Պլաստիկի սպառում և սննդի թափոնների մշակում
Միլենա Հարությունյան
Աղվան Թոռչյան
Լուսինե Դավթյան

Մենթոր՝ Սուսաննա Խաչատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ 1

Ներածություն 3

Մոնիթորինգի նպատակները 4

Մեթոդաբանություն 5

ՀԵԿՈՒՅՑ 1. Արթիկի անտառային գոտու աղբահանության խնդիրը 8

ՀԵԿՈՒՅՑ 2. Շիրակի մարզի անտառածածկ տարածքները 18

ՀԵԿՈՒՅՑ 3. Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումը և պահպանումը 31

ՀԵԿՈՒՅՑ 4. Օդի աղտոտվածությունը Վաղարշապատ համայնքում 43

ՀԵԿՈՒՅՑ 5. Գավառում պլաստիկի սպառում և սննդի թափոնների մշակում 56

Ընդհանուր եզրակացություն 73

Ընդհանուր առաջարկություններ 74

Աղբյուրներ, օգտագործված փաստաթղթեր և հավելվածներ 76

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի պահպանությունը և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացումը դարձել են ժամանակակից հասարակությունների կայուն զարգացման առաջնահերթություններից մեկը: Բնապահպանական խնդիրները, ինչպիսիք են թափոնների ոչ արդյունավետ կառավարումը, կանաչ տարածքների կրճատումը, օդի աղտոտվածությունը, անտառների դեգրադացիան և բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը, անմիջական ազդեցություն ունեն մարդկանց առողջության, կյանքի որակի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս խնդիրների արդյունավետ լուծումը հնարավոր է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ համագործակցության պայմաններում:

Քաղաքացիական մոնիթորինգը կարևոր գործիք է հանրային վերահսկողության, հաշվետվողականության և մասնակցային կառավարման խթանման համար: Այն հնարավորություն է տալիս քաղաքացիներին ոչ միայն արձանագրել առկա խնդիրները, այլև գնահատել հանրային քաղաքականությունների և ներդրումների արդյունավետությունը, վերհանել բացերն ու ներկայացնել փաստերի վրա հիմնված առաջարկություններ: Հատկապես կարևոր է երիտասարդների ներգրավվածությունը նման գործընթացներում, քանի որ նրանք ոչ միայն առավել զգայուն են կլիմայական և բնապահպանական մարտահրավերների նկատմամբ, այլև կարող են հանդես գալ որպես իրենց համայնքներում փոփոխությունների նախաձեռնողներ:

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Շիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի հինգ համայնքներում երիտասարդների կողմից իրականացված բնապահպանական քաղաքացիական մոնիթորինգի արդյունքները: Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են յուրաքանչյուր համայնքի համար առավել արդիական բնապահպանական խնդիրները՝ Արթիկի անտառային գոտու աղբահանությունը, Շիրակի մարզի անտառածածկ տարածքների վիճակը, Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումն ու պահպանումը, Վաղարշապատ համայնքի օդի աղտոտվածությունը, ինչպես նաև Գավառ համայնքում պլաստիկի սպառման և սննդի թափոնների կառավարման հարցերը:

Մոնիթորինգի շրջանակում կիրառվել են տեղանքի դիտարկումներ, փաստաթղթերի և հանրային քաղաքականությունների ուսումնասիրություն, տեղեկատվության հարցումներ, հարցազրույցներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ,

ինչպես նաև երիտասարդների և համայնքների բնակիչների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումներ: Այս համակցված մոտեցումը հնարավորություն է տվել գնահատել ոչ միայն շրջակա միջավայրի փաստացի վիճակը, այլև բնապահպանական քաղաքականությունների իրականացումը, հանրային մասնակցության մակարդակը և համայնքային կառավարման արդյունավետությունը:

Զեկույցի նպատակն է ներկայացնել փաստերի վրա հիմնված գնահատականներ, բարձրացնել հանրային իրազեկվածությունը, խթանել բնապահպանական որոշումների կայացման թափանցիկությունը և աջակցել պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին՝ մշակելու առավել արդյունավետ, մասնակցային և կայուն բնապահպանական քաղաքականություններ: Միաժամանակ, զեկույցը նպատակ ունի ընդգծել երիտասարդների դերը որպես համայնքային զարգացման և բնապահպանական պատասխանատու կառավարման կարևոր գործընկերների՝ խթանելով նրանց ակտիվ մասնակցությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներին:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Քաղաքացիական մոնիթորինգի շրջանակում սահմանվել են հետևյալ հիմնական նպատակները.

- գնահատել Ծիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի ընտրված համայնքներում առկա բնապահպանական խնդիրների ներկա վիճակը,
- ուսումնասիրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերը, քաղաքականությունները և կանաչ ներդրումները,
- գնահատել համայնքային մակարդակում բնապահպանական քաղաքականությունների իրականացման արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- բացահայտել շրջակա միջավայրի կառավարման ոլորտում առկա խնդիրները, բացերը և բարելավման հնարավորությունները,
- ուսումնասիրել քաղաքացիների, հատկապես երիտասարդների, իրազեկվածության, մասնակցության և ազդեցության մակարդակը բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում,
- մշակել փաստահեն առաջարկություններ՝ ուղղված

բնապահպանական կառավարման, հանրային մասնակցության և համայնքային քաղաքականությունների կատարելագործմանը,

- խթանել քաղաքացիական վերահսկողությունը և երիտասարդների ակտիվ մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության ու կայուն զարգացման գործընթացներում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն քաղաքացիական զեկույցը պատրաստվել է երիտասարդների կողմից իրականացված քաղաքացիական մոնիթորինգի արդյունքների հիման վրա՝ նպատակ ունենալով գնահատել Հայաստանի Ծիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի ընտրված համայնքներում բնապահպանական խնդիրների առկա վիճակը, տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառույցների գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությունը բնապահպանական կառավարման գործընթացներին:

Մոնիթորինգը հիմնվել է մասնակցային և ապացույցների վրա հիմնված մոտեցման վրա, որի շրջանակում կիրառվել են որակական և քանակական հետազոտական մեթոդների համադրություն: Յուրաքանչյուր համայնքում ուսումնասիրվել է տեղական մակարդակում առավել արդիական բնապահպանական մեկ խնդիր՝ հաշվի առնելով դրա ազդեցությունը շրջակա միջավայրի, համայնքի զարգացման և բնակչության կյանքի որակի վրա:

Տվյալների հավաքագրման և վերլուծության ընթացքում կիրառվել են հետևյալ հիմնական մեթոդները.

- **Փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն**. ուսումնասիրվել են ազգային և տեղական ռազմավարական փաստաթղթեր, համայնքների զարգացման ծրագրերը, իրավական ակտերը, բնապահպանական քաղաքականությունները, պաշտոնական հաշվետվությունները և այլ հրապարակային տեղեկատվության աղբյուրներ:
- **Պաշտոնական տեղեկատվության հարցումներ**. կիրառվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործիքները՝ պետական մարմիններից և տեղական ինքնակառավարման մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:
- **Հարցազրույցներ և հանդիպումներ**. անցկացվել են հարցազրույցներ

և աշխատանքային քննարկումներ համայնքների, պետական կառույցների, ոլորտային մասնագետների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ուսումնասիրության թեմաների վերաբերյալ լրացուցիչ փաստական տվյալներ և մասնագիտական գնահատականներ ստանալու նպատակով:

- **Դիտարկումներ և փաստագրում**. իրականացվել են տեղանքի այցելություններ, դիտարկումներ, լուսանկարահանում և փաստագրում՝ բնապահպանական խնդիրների փաստացի վիճակը գնահատելու համար:
- **Հարցումներ**. համայնքների երիտասարդների և բնակիչների շրջանում իրականացվել են առցանց հարցումներ՝ օգտագործելով Google Forms հարթակը: Հարցումները նպատակ ունեին գնահատելու բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը, վերաբերմունքը, մասնակցության մակարդակը և առաջնահերթությունները:
- **Տվյալների համադրություն և վերլուծություն**. հավաքագրված տեղեկատվությունը համակարգվել և համադրվել է տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հետ՝ ապահովելու արդյունքների հավաստիությունը և օբյեկտիվությունը:

Մոնիթորինգի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ ուղղություններին՝

- ընտրված բնապահպանական խնդրի արդիականությանը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունների և գործողությունների արդյունավետությանը,
- համայնքներում իրականացվող կանաչ ներդրումներին և բնապահպանական ծրագրերին,
- շրջակա միջավայրի որակի հիմնական ցուցանիշներին,
- քաղաքացիների, հատկապես երիտասարդների մասնակցությանը բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում,
- ինչպես նաև առկա խնդիրների լուծմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակմանը:

Քաղաքացիական մոնիթորինգի ողջ գործընթացը իրականացվել է թափանցիկության, մասնակցայնության, փաստահենության և հանրային հաշվետվողականության սկզբունքների հիման վրա: Զեկույցում ներկայացված բոլոր եզրակացություններն ու առաջարկությունները

հիմնված են մոնիթորինգի ընթացքում հավաքագրված փաստերի, պաշտոնական տեղեկատվության, դաշտային դիտարկումների և մասնակիցների կարծիքների համադրված վերլուծության վրա:

ՉԵԿՈՒՅՑ

1

ԱՐԹԻԿԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Արթիկ, Շիրակի մարզ

Չեկույցի հեղինակներ՝
Մարինա Մաթևոսյան
Կարինե Հարությունյան
Ռուբեն Քերոբյան

Մենթոր՝ Շուշան Թորոսյան

Անտառը կենսական նշանակություն ունեցող բնական համակարգ է, որը կազմված է փոխկապակցված ծառներից, թփերից, բուսական և կենդանական օրգանիզմներից:

Անտառները կարևոր դեր են կատարում կլիմայի կարգավորման, օդի մաքրման, հողի պահպանության և կենսաբազմազանության պահպանման գործում: Դրանք բարձրացնում են օդի հարաբերական խոնավությունը, նվազեցնում հողի խոնավության կորուստը, մեղմացնում քամիների ազդեցությունը և նպաստում բարենպաստ միկրոկլիմայի ձևավորմանը: Անտառային տարածքները նաև կարևոր դեր ունեն բնական աղետների կանխարգելման, հողերի էրոզիայի նվազեցման և շրջակա միջավայրի կայունության ապահովման գործում:

Արթիկի անտառային գոտին առանձնահատուկ նշանակություն ունի համայնքի համար: Այն հիմնականում արհեստականորեն ստեղծված անտառային տարածք է, որը տարիներ շարունակ ծառայել է որպես կանաչ գոտի, հանգստի և զբոսանքի վայր բնակիչների համար: Արթիկի հիմնական անտառային զանգվածը կազմում է շուրջ 1.250 հեկտար: Թեև հիմնական ծառատեսակը սոճին է, այնտեղ կան նաև եղևնիներ, կեչիներ, հացենիներ և այլ ծառատեսակներ: Անտառը ստեղծվել է արհեստական տնկարկների հիման վրա, և տարիների ընթացքում տեսակային կազմը որոշ չափով բազմազանացել է: Անտառային գոտին նպաստում է համայնքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, օդի որակի բարելավմանը և բնակիչների համար առողջ միջավայրի ձևավորմանը:

Սույն զեկույցը ներկայացնում է Արթիկի անտառային գոտու աղբահանության վերաբերյալ իրականացված քաղաքացիական մոնիթորինգի արդյունքները: Մոնիթորինգի ենթարկվող տարածքը Արթիկի անտառային գոտին է, որը համայնքի կարևոր բնական տարածքներից է և ծառայում է բնակիչների հանգստի, զբոսանքի և բնության հետ շփման նպատակներին:

Վերջին տարիներին տարածքում նկատվում է կենցաղային թափոնների կուտակում, ինչը բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի որակի, տարածքի գեղագիտական տեսքի և բնակիչների օգտագործման հնարավորությունների վրա: Աղբահանության խնդիրը հատկապես արդիական է այն պատճառով, որ անտառային գոտիները կարևոր դեր ունեն օդի մաքրման, կենսաբազմազանության պահպանության և համայնքային առողջ միջավայրի ձևավորման գործում:

Մոնիթորինգի հիմնական նպատակն է ուսումնասիրել անտառային գոտում աղբահանության ներկա վիճակը, պարզել խնդրի հիմնական պատճառները, գնահատել համայնքային կառավարման մարմինների դերը, ինչպես նաև բացահայտել քաղաքացիների և հատկապես երիտասարդների մասնակցության հնարավորությունները շրջակա

միջավայրի պահպանության գործընթացներում:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցչի մոնիթորինգ

Մոնիթորինգի համար ընտրվել են Արայիկ Հարությունյանը և Կարինե Բիչախչյանը, քանի որ նրանք աշխատում են Արթիկի համայնքապետարանի գյուղատնտեսական և բնապահպանական բաժնում և անմիջականորեն առնչվում են համայնքի բնապահպանական խնդիրներին, կանաչ տարածքների պահպանությանը և շրջակա միջավայրի կառավարմանը: Նրանց գործունեությունը կապված է նաև աղբահանության, բնապահպանական միջոցառումների և համայնքային մակարդակում իրականացվող համապատասխան ծրագրերի հետ, ինչը կարևոր է անտառային գոտու աղբահանության խնդրի ուսումնասիրության համար:

Մոնիթորինգում ընդգրկվել է նաև Լիլիթ Հաջաթյանը՝ Արթիկում գործող «Կլիմայի կայուն զարգացման» հասարակական կազմակերպության հիմնադիրը, քանի որ նրա գործունեությունը ուղղված է շրջակա միջավայրի պահպանությանը, կլիմայական և բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը և քաղաքացիների մասնակցության խթանմանը: Հասարակական հատվածի ներգրավումը հնարավորություն է տալիս գնահատել ոչ միայն համայնքային կառավարման մարմինների, այլև քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում:

Նրանց ընտրությունը պայմանավորված է ինչպես բնապահպանական ոլորտում ունեցած մասնագիտական ներգրավվածությամբ, այնպես էլ համայնքում շրջակա միջավայրի պահպանության, կանաչ նախաձեռնությունների և հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ ունեցած դերակատարությամբ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մոնիթորինգի շրջանակում ուսումնասիրվել են Արթիկի համայնքապետարանի գործունեությանը վերաբերող տեղական բնապահպանական ուղղությունները և թափոնների կառավարման հետ կապված քաղաքականությունները: Ուսումնասիրության ընթացքում ուշադրություն է դարձվել համայնքի մաքրության պահպանման, կանաչ տարածքների պահպանության և շրջակա միջավայրի բարելավման նպատակներին:

Վերլուծված փաստաթուղթ՝

Արթիկի համայնքապետարանի համայնքային զարգացման ծրագիր և աղբահանության կազմակերպման տեղական քաղաքականություններ:

- «Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, գիտագործնական կոնֆերանսի նյութեր», հուլիս, 2001թ., ք. Արթիկ

Ընդունման տարեթիվ՝ 20/05/2026թ.
Պատասխանատու հաստատություն՝ Արթիկի համայնքապետարան

ԿԱՆԱՉ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՆԵՐԴՐՈՒՄ 1



Ներդրման անվանումը՝ աղբամանների տեղադրում և սպասարկում հանրային տարածքներում

Ներդրման տեսակը՝ թափոնների կառավարում

Նախագծի փուլը՝ մասնակի իրականացված / շարունակական

Մոտավոր բյուջեն՝ չի նշվում

Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքային ընթացիկ ծախսեր

Ներդրման նպատակը՝ աղբի ճիշտ հավաքում և շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում

ՆԵՐԴՐՈՒՄ 2

Ներդրման անվանումը՝ Արթիկի անտառային գոտու և կանաչ տարածքների պարբերական մաքրում և բարեկարգում

Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքների պահպանում, թափոնների կառավարում, համայնքային մասնակցություն

Նախագծի փուլը՝ իրականացված / շարունակական

Մոտավոր բյուջեն՝ չի նշվում (համայնքային և կամավորական աշխատանքներ)

Ֆինանսավորման աղբյուրը՝ չի նշվում

Ներդրման նպատակը՝ անտառային գոտու սանիտարական վիճակի բարելավում, աղբի կուտակման նվազեցում և բնակիչների համար

անվտանգ ու մաքուր միջավայրի ապահովում: Նախագծի շրջանակում «Կլիմայի կայուն զարգացման» ՀԿ-ն համագործակցելով համայնքի և երիտասարդների հետ կազմակերպել է անտառի մաքրման աշխատանքներ, աղբի հավաքում, ինչպես նաև մասուրի հավաքման բնապահպանական միջոցառումներ՝ խթանելով երիտասարդների ակտիվ մասնակցությունը և բնապահպանական իրազեկվածությունը:

ՆԵՐԴՐՈՒՄ 3

Ներդրման անվանումը՝ Արթիկ համայնքում աղբամանների տեղադրում և աղբահանության համակարգի բարելավում

Ներդրման տեսակը՝ թափոնների կառավարում, համայնքային սանիտարական բարելավում

Նախագծի փուլը՝ շարունակական իրականացում

Մոտավոր բյուջեն՝ չի նշվում

Ֆինանսավորման աղբյուրը՝ Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում ՀՈԱԿ

Ներդրման նպատակը՝ համայնքում աղբահանության համակարգի բարելավում, աղբի ճիշտ հավաքման և սանիտարական պայմանների ապահովում: Ծրագրի շրջանակում նոր պլաստմասե աղբամաններ են տեղադրվում Արթիկ քաղաքում և համայնքի գյուղերում՝ այդ թվում Հոռոմում (56 աղբաման), Լուսակերտում (36 աղբաման), Սարատակում (36 աղբաման) և Հովտաշենում (22 աղբաման): Աշխատանքները կրում են շարունակական բնույթ և իրականացվում են ըստ նախապես մշակված ժամանակացույցի:

Քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունը

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել է Արթիկում քաղաքացիների և հատկապես երիտասարդների մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության և աղբահանության հետ կապված որոշումների կայացման գործընթացներին: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համայնքում առկա է բնապահպանական խնդիրների նկատմամբ հետաքրքրվածություն, սակայն մասնակցության մեխանիզմները դեռևս սահմանափակ են:

Քաղաքացիների մասնակցությունը հիմնականում դրսևորվում է տեղական նախաձեռնությունների, քննարկումների և շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ հասարակական արձագանքների միջոցով: Մոնիթորինգի շրջանակում իրականացված հարցումները նույնպես հանդիսացել են հանրային մասնակցության ձևերից մեկը, քանի որ հնարավորություն են տվել

բնակիչներին արտահայտելու իրենց կարծիքները և առաջարկությունները:

Համայնքում որոշ դեպքերում իրականացվում են մաքրման աշխատանքներ և բնապահպանական նախաձեռնություններ, որոնց մասնակցում են նաև երիտասարդներ: Երիտասարդների ներգրավվածությունը հիմնականում արտահայտվում է կամավորական աշխատանքների, իրազեկման միջոցառումների և համայնքային նախաձեռնությունների մասնակցության միջոցով:

Մասնակցության վերաբերյալ հիմնական դիտարկումներ

Կա՞ն արդյոք հանրության մասնակցության մեխանիզմներ:
Այո, սակայն դրանք հիմնականում ոչ ֆորմալ բնույթ ունեն և իրականացվում են տեղական նախաձեռնությունների, հարցումների և համայնքային քննարկումների միջոցով:

Կազմակերպվե՞լ են հանրային խորհրդակցություններ ընտրված նախագծերի համար:
Լայնածավալ հանրային խորհրդակցությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն չի արձանագրվել, սակայն առկա են համայնքային մակարդակով քննարկումների և իրազեկման առանձին փորձեր:

Երիտասարդները ներգրավվա՞ծ են այս գործընթացներում, թե՞ ոչ:
Այո, երիտասարդները մասամբ ներգրավված են բնապահպանական միջոցառումներում և մաքրման նախաձեռնություններում, սակայն նրանց մասնակցությունը կարող է լինել ավելի ակտիվ և կազմակերպված:

Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներ

ՑՈՒՑԻՉ	ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ	ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Անտառային գոտու մաքրության մակարդակ:	Որոշ հատվածներում արձանագրվել են կենցաղային թափոնների կուտակումներ:	Տեղանքի դիտարկում, լուսանկարահանում:
Հանրային մասնակցության մակարդակ:	Բնակիչների շրջանում առկա է հետաքրքրվածություն բնապահպանական խնդիրների նկատմամբ, սակայն մասնակցությունը սահմանափակ է:	Հարցման արդյունքներ, քննարկումներ բնակիչների հետ:
Աղբամանների հասանելիություն անտառային գոտու տարածքում:	Աղբամանները բավարար չեն բոլոր հատվածներում, ինչը նպաստում է աղբի կուտակմանը:	Տեղանքի դիտարկում, համայնքային տեղեկատվություն:
Թափոնների տեսակային կազմ (պլաստիկ, պոլիէթիլենային տոպրակներ, կենցաղային և այլն):	Հիմնականում գերակշռում են պլաստիկ և կենցաղային թափոնները:	Տեղանքի դիտարկում, լուսանկարահանում:
Տարածքի էկոլոգիական աղտոտման մակարդակ:	Աղբի առկայությունը որոշ հատվածներում բացասաբար է ազդում տարածքի էկոլոգիական վիճակի վրա:	Դիտարկումներ, լուսանկարներ:
Երիտասարդների մասնակցության մակարդակ բնապահպանական միջոցառումներին:	Երիտասարդները մասնակցում են որոշ կամավորական նախաձեռնությունների, սակայն ներգրավվածությունը մասնակի է:	Հարցումներ, քննարկումներ:

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքներ

Մոնիթորինգի ընթացքում իրականացված դիտարկումները, փաստաթղթերի ուսումնասիրությունը և բնակիչների շրջանում անցկացված հարցումները ցույց են տվել, որ Արթիկի անտառային գոտում առկա են աղբահանության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված մի շարք խնդիրներ: Տեղանքի ուսումնասիրության ընթացքում անտառային գոտու տարբեր հատվածներում արձանագրվել են կենցաղային թափոնների կուտակումներ: Դրանց թվում գերակշռել են՝

- զովացուցիչ ըմպելիքների շշեր,
- պոլիէթիլենային տոպրակներ,
- սննդի փաթեթավորման մնացորդներ,
- ապակյա շշեր,
- այլ կենցաղային աղբ:

Աղբի մի մասը համեմատաբար նոր նետված է եղել՝ պահպանված տեսքով և չվնասված վիճակում, ինչը վկայում է վերջին ժամանակահատվածում տարածքի աղտոտման մասին: Միաժամանակ արձանագրվել են նաև երկար ժամանակ տարածքում մնացած թափոններ՝ մասնակիորեն քայքայված պլաստիկ, հողի և բուսական ծածկույթի մեջ ներթափանցած պոլիէթիլենային մնացորդներ և եղանակային ազդեցությունից վնասված ապակյա տարաներ: Սա ցույց է տալիս, որ աղտոտումը կրում է ինչպես պարբերական, այնպես էլ երկարաժամկետ բնույթ: Դիտարկումների ընթացքում նկատվել է, որ աղբի կուտակումներն առավել հաճախ հանդիպում են այն հատվածներում, որոնք բնակիչների և այցելուների կողմից օգտագործվում են հանգստի, զբոսանքի կամ հավաքների համար: Որոշ վայրերում աղբամանների բացակայությունը կամ սահմանափակ հասանելիությունը կարող է նպաստել թափոնների՝ բնության մեջ նետմանը: Միևնույն ժամանակ, առկա աղբի տեսակային կազմը վկայում է, որ խնդիրը հիմնականում կապված է հանրային օգտագործման և կենցաղային սպառման արդյունքում առաջացող թափոնների հետ: Հանրային և համայնքային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համայնքային մակարդակում առկա է շրջակա միջավայրի պահպանության և աղբահանության կազմակերպման կարևորության գիտակցում, սակայն իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լիարժեք հասանելի և համակարգված չէ: Որոշ նախաձեռնություններ և մաքրման աշխատանքներ իրականացվում են, սակայն դրանց շարունակականությունն ու արդյունավետությունը բավարար չափով տեսանելի չեն: Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրված կանաչ ներդրումները և բնապահպանական նախաձեռնությունները հիմնականում

գտնվում են մասնակի իրականացման փուլում: Արձանագրվել է, որ անտառային գոտու մաքրման և բարեկարգման ուղղությամբ կատարվում են առանձին աշխատանքներ, սակայն խնդրի ամբողջական լուծման համար անհրաժեշտ են ավելի համակարգված և երկարաժամկետ միջոցառումներ: Քաղաքացիների մասնակցության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համայնքի բնակիչները հետաքրքրված են շրջակա միջավայրի խնդիրներով և կարևորում են անտառային գոտու մաքրության պահպանումը: Հարցումների և քննարկումների արդյունքում պարզվել է, որ հատկապես երիտասարդների շրջանում առկա է մասնակցության պատրաստակամություն, սակայն նրանց ներգրավվածությունը հիմնականում կրում է ոչ ֆորմալ և սահմանափակ բնույթ:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ համայնքում անհրաժեշտ է ուժեղացնել աղբահանության վերահսկողությունը, բարելավել հանրային իրազեկումը և խթանել քաղաքացիների մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության գործընթացներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա առաջարկվում է Արթիկի համայնքային կառավարման մարմիններին իրականացնել հետևյալ քայլերը՝ ուղղված անտառային գոտու աղբահանության և շրջակա միջավայրի պահպանության բարելավմանը:

1. **Աղբահանության համակարգի բարելավում և թափոնների տարանջատում**. անհրաժեշտ է ապահովել անտառային գոտում աղբահանության ավելի կանոնավոր կազմակերպում և վերահսկողության ուժեղացում: Միաժամանակ նպատակահարմար է ներդնել թափոնների տարանջատման տարրեր՝ առանձնացնելով կենցաղային աղբը բնական ծագման թափոններից: Սա կնպաստի թափոնների ավելի արդյունավետ կառավարմանը և շրջակա միջավայրի պահպանությանը:
2. **Բնական թափոնների վերօգտագործման համակարգի ներդրում**. անտառային գոտում առկա բնական թափոնները՝ չորացած և վնասված ճյուղերը, տերևները և այլ բուսական մնացորդները, նպատակահարմար է հավաքագրել և օգտագործել որպես կենսազանգվածային վառելիքի կամ կոմպոստի հումք: Այս մոտեցումը կնվազեցնի տարածքում կուտակվող թափոնների քանակը և կնպաստի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:
3. **Աղբամանների տեղադրում և ճիշտ տեղաբաշխում**. անհրաժեշտ

է անտառային գոտու առավել հաճախ այցելվող հատվածներում տեղադրել բավարար քանակի աղբամաններ: Սա կնվազեցնի աղբի անկանոն թափումը և կբարելավի տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը:

4. **Բնապահպանական կրթական միջոցառումների իրականացում անտառային գոտում**. առաջարկվում է երիտասարդների համար կազմակերպել բնապահպանական դասընթացներ, գործնական քննարկումներ և իրազեկման միջոցառումներ անմիջապես անտառային գոտու տարածքում: Բնության մեջ իրականացվող կրթական միջոցառումները հնարավորություն կտան երիտասարդներին անմիջականորեն տեսնել առկա խնդիրները, գիտակցել շրջակա միջավայրի պահպանության կարևորությունը և ձևավորել ավելի պատասխանատու վերաբերմունք բնական ռեսուրսների նկատմամբ:

5. **Երիտասարդների և համայնքի բնակիչների ներգրավվածության խթանում**. խրախուսել կամավորական խմբերի ձևավորումը և համայնքային բնապահպանական նախաձեռնությունների իրականացումը՝ մաքրման աշխատանքների, ծառատունկերի և իրազեկման արշավների միջոցով: Սա կնպաստի համայնքային պատասխանատվության բարձրացմանը և անտառային գոտու պահպանության նկատմամբ ավելի ակտիվ մասնակցությանը:

6. **Թափանցիկության և տեղեկատվության հասանելիության ապահովում**. պարբերաբար հրապարակել տեղեկատվություն իրականացվող բնապահպանական ծրագրերի, մաքրման աշխատանքների, դրանց արդյունքների և հետագա ծրագրերի վերաբերյալ: Սա կբարձրացնի հանրության վստահությունը և կնպաստի քաղաքացիների ավելի ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներում:

7. **Անտառ տանող ճանապարհի բարեկարգում**. քանի որ աղբամանների մի մասը տեղակայված է անտառային գոտու ավելի հեռավոր հատվածներում, անհրաժեշտ է բարեկարգել անտառ տանող ճանապարհները և արահետները: Սա կհեշտացնի ինչպես այցելուների, այնպես էլ աղբահանության ծառայությունների մուտքը տարածք, կապահովի աղբամանների ավելի արդյունավետ օգտագործումը և կնպաստի անտառային գոտու մաքրության ու պատշաճ պահպանության ապահովմանը:

ՉԵԿՈՒՅՑ

2

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Գյումրի, Շիրակի մարզ

Չեկույցի հեղինակներ՝
Ասյա Հարությունյան
Խաչատուր Մարտիրոսյան
Էլեն Հովհաննիսյան

Մենթոր՝ Տաթիկ Սերոբյան

Ըստ «ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն» փաստաթղթի՝ Շիրակի մարզը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ամենասակավ անտառածածկույթ ունեցող վարչական շրջանը, որտեղ բնական անտառային գոտիները գրեթե բացակայում են: Գլոբալ կլիմայական փոփոխությունների և ջերմաստիճանի բարձրացման պայմաններում այս բարձրադիր տափաստանային շրջանը դարձել է խիստ խոցելի: Անտառային և կանաչ շերտի սակավությունը հանգեցնում է տեղական միկրոկլիմայի չորացման, սաստկացնում է ուժեղ քամիներն ու փոշու շրջանառությունը, արագացնում հողերի էրոզիան և խաթարում ստորգետնյա ջրային ռեսուրսների բնական կուտակումն ու շրջանառությունը: Քաղաքային միջավայրում (մասնավորապես՝ Գյումրի քաղաքում), կանաչապատման ցածր մակարդակն ուղղակիորեն ազդում է բնակչության առողջության, օդի աղտոտվածության և ամռան ամիսներին ջերմային կղզիների առաջացման վրա: Հետևաբար, առկա կանաչ ֆոնդի պահպանությունը և նոր անտառաշերտերի հիմնումը ժամանակի հրամայականն են:

Թեման ընտրվել է, քանի որ մարզում առկա անտառային տնկարկները հաճախ կորցնում են կենսունակությունը կամ դառնում դեգրադացված թփուտներ՝ չստանալով պատշաճ խնամք: Քաղաքային միջավայրում (օրինակ՝ Գյումրի քաղաքում), ծառերի հատման որոշումները հաճախ ընդունվում են շինարարության պատրվակով, ինչը հանգեցնում է հանրային դժգոհության և պահանջում է քաղաքացիական վերահսկողություն: Սույն մոնիթորինգի զեկույցը գնահատում է, թե որքանով են արդյունավետ իրականացվում անտառների հիմնման համար հատկացվող պետական միջոցները և արդյոք նոր հիմնված անտառաշերտերը պահպանվում են:

Մոնիթորինգի գործողությունների հիմնական նպատակն է՝ գնահատել և վերլուծել Շիրակի մարզում անտառածածկույթի ներկա վիճակը:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի մոնիթորինգ

Անվանումը՝ Գյումրու համայնքապետարանի դենդրոլոգ Արտուշ Մովսիսյան
Հաստատության պատասխանատվության ոլորտը՝ բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին,
Մոնիթորինգին մասնակցած ներկայացուցիչը՝ Գյումրու համայնքապետարանի դենդրոլոգ Արտուշ Մովսիսյան

«Հարցազրույցների և տեղեկատվության հավաքագրման համար թիրախային պաշտոնյա է ընտրվել Գյումրու համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ

դենդրոլոգ Արտուշ Մովսիսյանը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա հանդիսանում է ոլորտի գլխավոր պատասխանատուն, անմիջականորեն ներգրավված է Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (GCAP) տեղական աշխատանքներում:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի անվանումը՝ Համլետ Սարուխանյան, Արմեն Ավալյան
Հաստատության պատասխանատվության ոլորտը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ «Գյումրի անտառատնտեսություն» մ/ճ ավագ անտառապետ և անտառապաթոլոգ, անտառատեսության ինժիներ

«Ծիրակի մարզի անտառածածկ տարածքներ» թեմայով իրականացվող քաղաքացիական մոնիթորինգի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրի անտառատնտեսություն» մասնաճյուղի ավագ անտառապետի և անտառապաթոլոգ, անտառատնտեսության ինժեների ընտրությունը պայմանավորված է նրանց առանցքային մասնագիտական դերակատարմամբ և մարզի անտառային ֆոնդի կառավարման անմիջական լիազորություններով: Լինելով տարածաշրջանի անտառների պահպանության, վերականգնման և հաշվառման համար պատասխանատու գլխավոր կառույցի ներկայացուցիչներ՝ այս մասնագետներն օժտված են իրավասությամբ և փորձառությամբ՝ տրամադրելու հավաստի, գիտականորեն հիմնավորված տվյալներ առկա անտառային գոտիների կենսունակության, ծառերի հիվանդությունների, էկոլոգիական դեգրադացիայի դեմ պայքարի, ինչպես նաև նոր անտառհիմնման ծրագրերի ինժեներական և կազմակերպչական մարտահրավերների վերաբերյալ: Նրանց հետ հանդիպումը թույլ է տալիս մեկտեղել խորքային բուսաբանական, բնապահպանական ու գործնական-տեխնիկական տեղեկատվությունը՝ ապահովելով մոնիթորինգի արդյունքների ամբողջականությունն ու օբյեկտիվությունը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Վերլուծված փաստաթուղթ՝ «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032 թթ. կառավարման պլան
Ընդունման տարեթիվ՝ 2023 թ
Պատասխանատու հաստատություն՝ Անտառային կոմիտե «Հայանտառ» ՊՈԱԿ

Վերլուծված փաստաթուղթ՝ Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր (ԿՔԳԾ):
Ընդունման տարեթիվ՝ 2019 թ.
Պատասխանատու հաստատություն՝ Գյումրու քաղաքապետարան:

Կանաչ ներդրումների բացահայտում

Հիմնվելով Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (ԿՔԳԾ/ GCAP) տվյալների վրա՝ ստորև ներկայացված են կանաչ տարածքների և անտառային գոտիների ընդլայնմանն ու պահպանմանն ուղղված հիմնական նախագծերը.

1. **Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում** Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքներ / կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում:

   Նախագծի փուլ՝ իրականացման փուլում (2022-2025թթ.),
   Մոտավոր բյուջեն՝ 3,000,000 եվրո (շուրջ 1,590,000,000 ՀՀ դրամ),
   Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքային բյուջե, ՀՀ կառավարություն, մասնավոր հատված,
   Ներդրման նպատակը՝ ձեռք բերել և բարեկարգել 40 հեկտար նոր կանաչ տարածք, ստեղծել ռազմավարական նշանակության կանաչ ենթակառուցվածք և վերականգնել քաղաքին բնորոշ բնապատկերը՝ վերացնելով կանաչ գոտիների դեֆիցիտը:

2. **Հանրային զբոսայգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն**
   Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքներ / մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ,
   Նախագծի փուլը՝ իրականացման փուլում (2020-2029թթ.),
   Մոտավոր բյուջեն՝ 50,000 եվրո (շուրջ 26,500,000 ՀՀ դրամ),
   Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքային բյուջե, ՀՀ կառավարություն, մասնավոր հատված,
   Ներդրման նպատակը՝ բարելավել առկա զբոսայգիների

տեխսպասարկումն ու կառավարումը, ինչպես նաև ապահովել կանաչ տարածքների վերաբերյալ տվյալների պարբերական մշտադիտարկում:

3. **Նախկին արդյունաբերական տարածքների ռեկուլտիվացիա՝ քաղաքային վերականգնման նպատակով**
   Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքներ / հողօգտագործում և ռիսկերի նվազեցում,
   Նախագծի փուլը՝ իրականացման փուլում (2022-2025թթ.),
   Մոտավոր բյուջեն՝ 1,000,000 եվրո (շուրջ 530,000,000 ՀՀ դրամ),
   Ֆինանսավորման աղբյուրը՝ քաղաքային բյուջե, ՀՀ կառավարություն, ՄՖՀ-ներ և դոնորներ, մասնավոր հատված,
   Ներդրման նպատակը՝ վերականգնել լքված արդյունաբերական տարածքները և դրանք վերածել կանաչ գոտիների՝ քաղաքաշինական կարիքների բավարարման և բնապահպանական ռիսկերի չեզոքացման համար:

4. **Քաղաքի կենսաբազմազանության ելակետային տվյալների ամրագրում**
   Ներդրման տեսակը՝կանաչ տարածքներ / կենսաբազմազանություն և էկոհամակարգեր,
   Նախագծի փուլը՝ իրականացման փուլում (2021-2030թթ.),
   Մոտավոր բյուջեն՝ 300,000 եվրո (շուրջ 159,000,000 ՀՀ դրամ),
   Ֆինանսավորման աղբյուրը՝ քաղաքային բյուջե, ՀՀ կառավարություն, ՄՖՀ-ներ և դոնորներ,
   Ներդրման նպատակը՝ իրականացնել քաղաքի կենսաբազմազանության համապարփակ գնահատում և քարտեզագրում, քանի որ ներկայումս առկա տեղեկությունները խիստ սահմանափակ են:

5. **Կանաչ տարածքներում հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում**
   Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքներ / ջրային ռեսուրսների կառավարում,
   Նախագծի փուլը՝ իրականացման փուլում (2021-2025թթ.),
   Ներդրման նպատակը՝ արդիականացնել ջրային ենթակառուցվածքները քաղաքի կանաչ գոտիներում՝ ապահովելով արդյունավետ ոռոգում և նվազեցնելով ջրային կորուստները:

6. **ԵՄ-ն Ծրջակա միջավայրի համար. Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա**
   Ներդրման անվանումը՝ ԵՄ-ն Ծրջակա միջավայրի համար. Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա,

Ներդրման տեսակը՝ կանաչ տարածքներ / անտառվերականգնում,
Նախագծի փուլը՝ իրականացման փուլում (2021թ. մարտի 1-ից),
Մոտավոր բյուջեն՝ մարզային զարգացման ծրագրով նախատեսված է շուրջ 240 մլն դրամ անտառվերականգնման համար,
Ֆինանսավորման աղբյուրը՝ Եվրոպական միություն, «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ,
Ներդրման նպատակը՝ նոր անտառների հիմնում (թիրախային՝ 200 հա) և եղածների վերականգնում Շիրակի մարզում:

Քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունը

Ըստ մեր իրականացրած հարցման՝ ստացել ենք մասնակցության վերաբերյալ հետևյալ արդյունքները.

1. Կա՞ն արդյոք հանրության մասնակցության մեխանիզմներ

Հանրության մասնակցության որոշակի մեխանիզմներ և գործիքներ գոյություն ունեն, սակայն դրանց թափանցիկության պահանջարկը մեծ է.

- **Առցանց հարթակներ (առաջարկների ներկայացում.**հարցվածների մեծամասնությունը՝ **55,7%-ը**, նշել է, որ պատրաստակամորեն կօգտվեր քաղաքապետարանի կողմից ստեղծված թվային հարթակից՝ բնապահպանական հարցերով առաջարկներ ներկայացնելու համար: Սա ցույց է տալիս, որ թվային մեխանիզմների ներդրումը կարող է էապես բարձրացնել մասնակցայնությունը:
- **Կամավորական տեղական նախաձեռնություններ**. բնակչության շրջանում առկա է պատրաստակամության բարձր մակարդակ՝ սեփական ուժերով մասնակցելու տեղական բնապահպանական ծրագրերին: Հարցվածների **68,9%-ը** պատրաստ է որպես կամավոր մասնակցել Շիրակի մարզի անտառվերականգնման (օրինակ՝ 200 հա անտառի հիմնման) նախագծերին:
- **Ազդեցության նկատմամբ հավատը**. քաղաքացիների ճնշող մեծամասնությունը (**73,8%**) հավատում է, որ իրենց բարձրաձայնած կարծիքը կարող է ազդել քաղաքի բնապահպանական որոշումների վրա: Չնայած այս լավատեսությանը՝ տեղեկատվության թափանցիկությունը մնում է խնդրահարույց. հարցվածների **80,3%-ը** բոլորովին թափանցիկ չի համարում ՏԻՄ-երի կողմից ծառահատումների վերաբերյալ կայացված որոշումները:

2. Կազմակերպվե՞լ են հանրային խորհրդակցություններ ընտրված նախագծերի համար

Տվյալները փաստում են, որ հանրային խորհրդակցություններ ու

քննարկումներ կազմակերպվում են, սակայն քաղաքացիների իրական մասնակցությունն ու իրազեկվածությունը դեռևս ցածր մակարդակի վրա են.

- **Հանրային լսումներ և աշխատաժողովներ**. հարցվածների միայն **29,5%-ն** է երբևէ մասնակցել քաղաքապետարանի կողմից կազմակերպված բնապահպանական հանրային լսումներին կամ աշխատաժողովներին, մինչդեռ **70,5%-ը** երբևէ չի մասնակցել:
- **Նախագծերի և քննարկումների մասին իրազեկվածություն**.
  - Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (ԿՔԳԾ/GCAP) մասին բնակչության մեծ մասը՝ **63,9%-ը**, տեղյակ չէ:
  - Շինարարության պատճառով 51 հասուն ծառերի հատման շուրջ առաջացած քննարկումներից նույնպես հանրության մեծամասնությունը՝ **78,7%-ը**, տեղեկացված չի եղել:
- **Տեղեկատվության ստացման աղբյուրները (հարցումներ)**. քաղաքացիները տեղական նախագծերի և խնդիրների մասին հիմնականում տեղեկանում են ոչ թե պաշտոնական խորհրդակցություններից կամ ՏԻՄ կայքից (միայն 8,2%), այլ սոցիալական ցանցերից (**78,7%**) և լրատվամիջոցներից (**23%**):

Երիտասարդները ներգրավվածությունն այս գործընթացներում

Երիտասարդներն ակտիվորեն ներգրավված է բնապահպանական հարցումներում և խնդիրների վերհանման գործընթացում.

- **Մասնակիցների տարիքային կազմը**. հետազոտության մասնակիցների գերակշիռ մասը երիտասարդներն են: Հարցվածների **36,4%-ը** 13-20 տարեկան են, իսկ **27,3%-ը**՝ 20-30 տարեկան: Այսինքն՝ ընդհանուր լսարանի **63,7%-ը** մինչև 30 տարեկան երիտասարդներ են:
- **Ներգրավվածության ձևաչափը**. նրանք իրենց տեսակետն արտահայտում են հարցումների միջոցով, ինչպես նաև տեղեկատվություն են ստանում երիտասարդական կենտրոններից (օրինակ՝ հարցման մեջ նշված է «Youth House»-ը): Սա փաստում է, որ երիտասարդ սերունդն ունի բարձր հետաքրքրվածություն քաղաքի էկոլոգիական խնդիրների (փոշի, աղբահանություն, կանաչ տարածքներ) նկատմամբ և պատրաստ է ներգրավվել թվային ու կամավորական հարթակներում, եթե դրանք պատշաճորեն հասանելի լինեն:

Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներ

ՑՈՒՑԻՉ	ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ	ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Կանաչ տարածքներ	Գյումրիում բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը կազմում է 3.91 մ²/բնակիչ	Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր (ԿՔԳԾ)
Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում	Փոշու (TSP) միջին տարեկան կոնցենտրացիան կազմում է 325.6 մկգ/մ³:	Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր (ԿՔԳԾ)

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքները

Մոնիթորինգի շրջանակում իրականացվել է Շիրակի մարզի անտառային ֆոնդի և Գյումրի համայնքի կանաչ տարածքների վերաբերյալ մասնագիտական աղբյուրների, ռազմավարական փաստաթղթերի և վիճակագրական տվյալների ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով գնահատել անտառածածկույթի կրիտիկական սակավությունը, դրա էկոլոգիական հետևանքներն ու կառավարման արդյունավետությունը:

Ըստ աղբյուրների՝ անտառների սակավությունը Շիրակի մարզում ունի ռազմավարական և էկոլոգիական անվտանգության նշանակություն, քանի որ մարզը հանդիսանում է հանրապետության ամենասակավ անտառածածկույթ ունեցող վարչական միավորը: Անտառային գոտիները զբաղեցնում են մարզի ընդհանուր տարածքի 23%-ը:

Անտառները հանդիսանում են բնական «սպունգներ», որոնք պահում են անձրևաջրերն ու հալոցքաջրերը և սնում ստորգետնյա աղբյուրները: Դրանց սակավությունը հանգեցնում է ջրային հոսքերի արագ հեռացմանը տարածքից, ինչը պատճառ է դառնում աղբյուրների չորացման և ստորգետնյա ջրերի մակարդակի անկման:

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են անտառների սակավության էկոլոգիական և տնտեսական ազդեցությունները.

- Կլիմայական խոցելիություն. անտառային շերտի բացակայությունը խախտում է տեղական միկրոկլիման՝ սաստկացնելով ամառային երաշտներն ու ձմեռային խստաշունչ քամիները:
- Հողերի դեգրադացիա. ուժեղ քամիներն ու հալոցքաջրերը քայքայում են հողի բերրի շերտը՝ արագացնելով անապատացման և էրոզիայի գործընթացները:
- Գյուղատնտեսական ռիսկեր. Շիրակը հացահատիկային

առաջատար շրջան է, սակայն դաշտապաշտպան անտառաշերտերի բացակայությունը թույլ է տալիս, որ ուժեղ քամիները (խորշակները) չորացնեն հողն ու վնասեն մշակաբույսերը:

- Առողջապահական խնդիրներ. կանաչ գոտիների պակասը բացասաբար է անդրադառնում բնակչության շնչառական առողջության վրա՝ փոշու շրջանառության և քամիների ազդեցության պատճառով:

Տնկարկների վիճակը. մարզի շուրջ 4.660 հեկտար անտառային հողերից փաստացի տնկարկներ առկա են միայն 2.033 հեկտարի վրա: Պահպանված տնկարկների մի մասը դեգրադացված է և վեր է ածվել թփուտների:

1. Քաղաքային կանաչապատում. Գյումրիում բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով կազմում է ընդամենը 3.91 մ², ինչը զգալիորեն ցածր է ԱՀԿ-ի կողմից առաջարկվող 9 մ² նվազագույն շեմից: Կանաչ տարածքները կազմում են քաղաքի ընդհանուր մակերեսի ընդամենը 10%-ը:
2. Ծրագրերի արդյունավետություն. ինչ վերաբերում է ներդրումների իրականացմանը, ապա մոնիթորինգը փաստում է, որ ծրագրային թիրախները հաճախ մնում են թղթի վրա կամ իրականացվում են ցածր արդյունավետությամբ. օրինակ՝ 2014-2017թթ. անտառվերականգնման համար հատկացված 240 մլն դրամի ծրագիրը չի ապահովել սպասված կայուն արդյունքները խնամքի և ոռոգման բացակայության պատճառով, իսկ Գյումրու 2006թ. հատակագծով նախատեսված կանաչապատման ցուցանիշները չեն ապահովվել:

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են նաև իրականացվող ծրագրերը: Գլխավոր ռազմավարական փաստաթուղթը Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրն է (ԿՔԳԾ), որը նախատեսում է բնապահպանական վիճակի բարելավում մինչև 2035 թվականը: Սակայն արձանագրվում է, որ քաղաքաշինական շահերը հաճախ գերակայում են էկոլոգիական առաջնահերթություններին, ինչի օրինակն է Գյումրիում 51 հասուն ծառերի հատման շուրջ առաջացած հանրային դժգոհությունը: Առկա է տվյալների մշտադիտարկման և հողօգտագործման միասնական պլանավորման խիստ անհրաժեշտություն:

Հետազոտության մեթոդաբանությունը և ընտրանքի նկարագրությունը

Իրականացվել է քանակական սոցիոլոգիական հարցում Ծիրակի մարզի 104 բնակիչների հետ: Հարցվածների 36,4%-ը 13-20 տարեկան են, իսկ 27,3%-ը՝ 20-30 տարեկան (ընդհանուր առմամբ երիտասարդությունը կազմում է ընտրանքի ավելի քան 63%-ը): Աշխարհագրական բաշխվածության

տեսանկյունից ամենամեծ մասնակցությունն ապահովել են Գյումրի քաղաքի բնակիչները (41,5%):

Հարցման արդյունքների հանգուցային վերլուծություն

Բնակիչների 63,9%-ը տեղյակ չէ Գյումրու «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (ԿՔԳԾ/GCAP) մասին: Սա փաստում է այն մասին, որ համայնքային նշանակության խոշորագույն էկոլոգիական ռազմավարությունը պատշաճ կերպով չի հանրայնացվել և բնակչության լայն շերտերին հասանելի չէ:

Քաղաքի օդի որակի (փոշոտվածության) գնահատման հարցում բնակիչների գրեթե կեսը՝ 47,5%-ը, իրավիճակը գնահատել է միջին (3 միավոր), սակայն բացասական գնահատականների (4 և 5 միավոր) ընդհանուր կշիռը բավականին բարձր է՝ կազմելով 37,7%: Սա վկայում է այն մասին, որ փոշոտվածությունը քաղաքում շարունակում է մնալ մտահոգիչ մակարդակի վրա:

Բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 78,7%-ը, գտնում է, որ իրենց թաղամասերում կանաչ տարածքները բավարար չեն: Այս ցուցանիշը հստակ ազդակ է ՏԻՄ-երին՝ կանաչապատման ծրագրերը դեպի բնակելի թաղամասեր ապակենտրոնացնելու անհրաժեշտության մասին:

Ցածր է բնապահպանական կառավարմանը բնակիչների անմիջական մասնակցության մակարդակը. հարցվածների 70,5%-ը երբևէ չի մասնակցել քաղաքապետարանի կազմակերպած հանրային լսումներին կամ աշխատաժողովներին, ինչը հաստատում է, որ լսումները հաճախ կրում են ֆորմալ բնույթ և չունեն լայն հանրային ներգրավվածություն:

Չնայած սոցիալական մեդիայում եղած բարձր աղմուկին՝ քաղաքի բնակիչների 78,7%-ը տեղյակ չէ շինարարության պատճառով 51 հասուն ծառերի հատման շուրջ առաջացած քննարկումներից: Սա խոսում է այն մասին, որ էկոլոգիական ճգնաժամային խնդիրները մնում են սահմանափակ թվով ակտիվիստների կամ նեղ շրջանակների օրակարգում:

Համայնքում առկա է ՏԻՄ-երի հանդեպ թափանցիկության և վստահության խորը ճգնաժամ. հարցվածների 80,3%-ը բոլորովին թափանցիկ չի համարում ՏԻՄ-երի կողմից ծառահատումների վերաբերյալ կայացված որոշումները, իսկ ամբողջովին թափանցիկ համարողների կշիռը հազիվ հասնում է 8,2%-ի:

Բնակչության շրջանում առկա է բարձր քաղաքացիական պոտենցիալ և կամավորության պատրաստակամություն. հարցվածների 68,9%-ը միանշանակ պատրաստ է որպես կամավոր մասնակցել Ծիրակի մարզում 200 հա անտառի հիմնման և անտառվերականգնման ծրագրերին, ինչը

հսկայական ռեսուրս է ՀԿ-ների և պետական կառույցների համար:

Տեղեկատվության ստացման աղբյուրների հարցում բացարձակ առաջատար են սոցիալական ցանցերը (78,7%), մինչդեռ ՏԻՄ պաշտոնական կայքից օգտվում է հարցվածների միայն 8,2%-ը: Սա ցույց է տալիս, որ ՏԻՄ կայքը՝ որպես տեղեկատվական հարթակ, արդյունավետ չէ և չի ծառայում իր նպատակին:

Էկոլոգիական գրագիտության մակարդակը բավականին ցածր է. բնակիչների 72,1%-ը տեղյակ չէ թափոնների կառավարման համաշխարհային 5R սկզբունքի (նվազեցնել, վերօգտագործել, վերամշակել և այլն) մասին, ինչը կենցաղային աղբի տեսակավորման մշակույթի բացակայության հիմնական պատճառներից է:

Չնայած ՏԻՄ որոշումների թափանցիկության պակասին՝ առկա է մեծ լավատեսություն սեփական ուժերի հանդեպ. հարցվածների 73,8%-ը հավատում է, որ իր բարձրաձայնած կարծիքը կարող է ազդել քաղաքի բնապահպանական որոշումների վրա: Սա քաղաքացիական հասարակության զարգացման կարևոր նախապայման է:

Քաղաքացիների 60,7%-ը բացարձակապես չի տիրապետում քաղաքի դենդրոլոգի գործառույթներին և պատասխանատվության ոլորտներին, իսկ որոշ չափով տեղյակ է 37,7%-ը: Սա նշանակում է, որ բնակիչները չգիտեն, թե կանաչապատման կամ ծառերի հիվանդությունների հարցով կոնկրետ որ մասնագետին պետք է դիմեն:

Իրականացված վերջին ծառատունկերի արդյունավետությունը բնակիչների կողմից գնահատվում է հիմնականում միջին՝ 44,3% (3 միավոր): Ծառատունկերը խիստ արդյունավետ (5 միավոր) և լիովին անարդյունավետ (1 միավոր) համարողների կշիռները գրեթե հավասար են (համապատասխանաբար՝ 18% և 9,8%):

Քաղաքացիների մեծամասնությունը (55,7%-ը) պատրաստակամություն է հայտնել օգտվել քաղաքապետարանի կողմից ստեղծվելիք թվային հարթակից՝ բնապահպանական առաջարկներ ներկայացնելու համար, ինչը նոր, ինտերակտիվ գործիքների ներդրման հստակ պահանջարկ է ձևավորում:

Գյումրիի բնակիչները որպես ամենաառաջնային բնապահպանական խնդիրներ առանձնացրել են աղբահանությունը (8,3%), փոշին (6,7%) և կանաչ տարածքների պակասը (5%): Հատկանշական է, որ բնակիչների մի մասը գտնում է, որ այս բոլոր խնդիրները քաղաքում փոխկապակցված են և ունեն հավասար առաջնահերթություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնվելով Ծիրակի մարզի և Գյումրի համայնքի կանաչապատման, անտառածածկույթի սակավության և իրականացվող քաղաքացիական մոնիթորինգի առանձնահատկությունների (թիրախավորելով ՏԻՄ որոշումները, Գյումրու համայնքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը, ինչպես նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրի անտառատնտեսություն» մասնաճյուղը), և մեր իրականացրած հարցումների վրա՝ առաջարկում ենք հետևյալ **առանցքային առաջարկությունները** մշտադիտարկվող ներկայացուցիչների համար.

Որոշումների կայացման թափանցիկության բարելավում և հանրային մասնակցայնության ապահովում

Ապահովել քաղաքային կանաչ տարածքների փոփոխությանը, ծառահատումներին կամ նոր կանաչապատման գոտիների հիմնմանը վերաբերող որոշումների կայացման լիարժեք թափանցիկություն: Բացառել հանրային լսումների ֆորմալ բնույթը և ներդնել հանրության, բնապահպանական ՀԿ-ների ու անկախ փորձագետների հետ իրական, նախնական քննարկումների մեխանիզմ՝ նախքան շինարարական կամ ծառահատման թույլտվություններ տրամադրելը:

Քաղաքի կանաչ ֆոնդի և համապատասխան տվյալների բաց, հանրամատչելի հրապարակում (Կանաչ կադաստրի ներդրում)

Մշակել և համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել Գյումրի համայնքի ծառերի և կանաչ գոտիների հստակ հաշվառման տվյալները (գույքագրումը): Պարբերաբար հանրայնացնել հաշվետվություններ՝ իրականացված ծառատունկերի քանակի, տնկված ծառատեսակների, դրանց կպչողականության (չորացման/ապրելիության տոկոսի) և խնամքի համար ծախսված բյուջետային միջոցների վերաբերյալ:

Երիտասարդների և ուսանողների ներգրավում էկոլոգիական կառավարման գործընթացներում. ստեղծել կայուն հարթակներ (կամ կամավորական էկո-ակումբներ)՝ Ծիրակի մարզի երիտասարդներին, ուսանողներին և դպրոցականներին կանաչապատման, ծառերի խնամքի, ինչպես նաև քաղաքային էկոլոգիական քաղաքականության մշակման աշխատանքներում ակտիվորեն ներգրավելու համար: Սա կբարձրացնի հանրային պատասխանատվությունը և կնպաստի համայնքային կանաչ տարածքների պահպանությանը:

Թվային հարթակի ներդրում. հաշվի առնելով բնակիչների 55,7% պատրաստակամությունը՝ անհրաժեշտ է մշակել թվային հարթակ

կամ հավելված, որտեղ քաղաքացիները կկարողանան ուղարկել բնապահպանական առաջարկներ և ստանալ թափանցիկ պատասխաններ:

Կամավորական ռեսուրսի օգտագործում. ՀԿ սեկտորը և ՏԻՄ-ը պետք է համատեղ կազմակերպեն անտառհիմնման և ծառատունկի աշխատանքներ՝ օգտագործելով բնակիչների շրջանում առկա կամավորության բարձր պատրաստակամությունը (68,9%):

ՉԵԿՈՒՅՑ

3

ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Արմավիր, Արմավիրի մարզ

Հեղինակներ՝

Լիլիա Դավթյան
Ռիմա Տոնյան
Արմեն Սաֆարյան

Մենթոր՝ Լիլիթ Գևորգյան

Սույն քաղաքացիական մոնիթորինգի շրջանակներում իրականացվել է Արմավիր համայնքի, մասնավորապես՝ Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացման, ոռոգման համակարգերի արդիականացման և կենտրոնական էկոլոգիական/հանրային գոտիների բարեկարգմանն ուղղված գործողությունների և ծրագրերի ուսումնասիրություն: Մասնավորապես, մոնիթորինգի են ենթարկվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կողմից ներկայացված՝ 2024 թվականին պետական սուբվենցիոն միջոցներով իրականացված խոշոր ենթածրագրերը:

Ժամանակակից աշխարհում կլիմայական փոփոխությունները և բնապահպանական մարտահրավերները գնալով ավելի նկատելի ու մտահոգիչ են դառնում: Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում քաղաքային կանաչ գոտիների ստեղծումն ու դրանց հետևողական պահպանությունը: Արմավիր քաղաքի կանաչ տարածքների ընդլայնումն ու պատշաճ խնամքը վճռորոշ դեր ունեն քաղաքի էկոլոգիական հավասարակշռության պահպանման, մթնոլորտային օդի մաքրման, ինչպես նաև բնակիչների հանգստի ու առողջ ժամանցի արդյունավետ կազմակերպման գործում:

Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումն ու պահպանումը հանդիսանում են համայնքի կայուն, էկոլոգիապես անվտանգ և հարմարավետ զարգացման նախապայմանը: Թեմայի ընտրությունը պայմանավորված է նաև շրջակա միջավայրի հարցերի նկատմամբ հանրային հետաքրքրության աճով և համայնքում իրականացվող բնապահպանական ու կանաչ ներդրումների արդյունավետության, ինչպես նաև նախագծերի իրականացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման խիստ անհրաժեշտությամբ:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի մոնիթորինգ

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցչի անվանումը՝ Արմավիրի համայնքապետարան (կից գործող «Կանաչապատում» ՀՈԱԿ-ի/ՊՈԱԿ-ի հետ համատեղ)

Հաստատության պատասխանատվության ոլորտը՝ բնապահպանություն, կոմունալ սպասարկում, ենթակառուցվածքների կառավարում և քաղաքաշինություն

Արմավիրի համայնքապետարանի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս կառույցի գործունեությունն ու որոշումներն անմիջական ազդեցություն ունեն քաղաքի ենթակառուցվածքների, կանաչ տարածքների պահպանման, բարեկարգման և բնակիչների կյանքի որակի

վրա: Վերջին տարիներին համայնքում նկատելիորեն ակտիվացել են կանաչ ներդրումներն ու բարեկարգման ծրագրերը, ինչն առաջնահերթ է դարձնում դրանց արդյունավետության, տեղեկատվության մատչելիության և ծախսերի թափանցիկության քաղաքացիական գնահատումը:

Բացի այդ, շրջակա միջավայրի հարցերի նկատմամբ համայնքի բնակիչների հետաքրքրությունն ու մտահոգությունը գնալով աճում են: Ուստի, մոնիթորինգը հնարավորություն է տալիս հասկանալ, թե որքանով են տեղական իշխանությունները պատրաստակամ ներգրավելու հանրությանը որոշումների կայացման մեջ և արդյոք իրականացվող քաղաքականությունը համապատասխանում է բնակիչների իրական կարիքներին: Համայնքապետարանն ունի հանրային նշանակության լայն գործառույթներ, և այս գործընթացը կարող է լավագույն օրինակը դառնալ ՏԻՄ-հանրություն կապի ամրապնդման և կառավարման հաշվետվողականության բարձրացման համար՝ նպաստելով ավելի կայուն ու էկոլոգիապես մաքուր քաղաքային միջավայրի ձևավորմանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ (ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ)

Մոնիթորինգի շրջանակում ուսումնասիրվել են Արմավիրի համայնքապետարանի գործունեությանը վերաբերող տեղական բնապահպանական ուղղությունները, քաղաքային կանաչ գոտիների խնամքի և ոռոգման համակարգերի կառավարման հետ կապված քաղաքականությունները: Ուսումնասիրության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքի էկոլոգիական վիճակի բարելավման, կանաչ տարածքների պահպանության, ընդլայնման և հանրային ներդրումների թափանցիկության ապահովման նպատակներին:

Վերլուծված փաստաթղթեր և աղբյուրներ՝

- Արմավիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիր (ՀԶԾ) և կանաչապատման ոլորտի տեղական քաղաքականություններ:
- Արմավիրի համայնքապետարանի և կից գործող «Կանաչապատում» ՀՈԱԿ-ի տարեկան աշխատանքային պլաններ (ՏԱՊ) ու բյուջետային հատկացումների հաշվետվություններ:
- ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից հրապարակված՝ 2024 թվականի սուբվենցիոն միջոցներով Արմավիր համայնքում իրականացված ծրագրերի հաշվետվություններ:

Պատասխանատու հաստատություններ՝ Արմավիրի համայնքապետարան և ՀՀ ՏԿԵ նախարարություն

Համապատասխան նպատակները և դրանց հիման վրա կատարված աշխատանքները՝

Նպատակ 1. համայնքի կանաչ տարածքների, այգիների, պուրակների պահպանություն, վերականգնում և հետևողական բարեկարգում

Իրականացված ծրագիր. վերակառուցվել է Արմավիր քաղաքի կենտրոնական հրապարակի շատրվանը (2023 թ. հավանության արժանացած սուբվենցիա, ավարտվել է 2024-ին)։ Ենթածրագրի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 169,5 մլն դրամ (30%-ը՝ կառավարություն, 70%-ը՝ համայնք)։ Ծրագրի արդյունքում կառուցվել է նոր շատրվանի երկաթբետոնե մոնոլիտ կոնստրուկցիա (91.42 քմ), իրականացվել է բազալտե սալիկներով և երեսքարերով երեսպատում (207.34 գծամետր, 42.29 քմ), անցկացվել է լուսաձայնային համակարգ, ինչը նպաստում է քաղաքի կենտրոնական էկոլոգիական և հանրային ժամանցի գոտու բարելավմանը։

Նպատակ 2. կանաչ գոտիների խնամքի և ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում ու արդիականացում

Իրականացված ծրագիր. իրականացվել է Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի մայթերի բարեկարգում և կանաչապատ տարածքների ոռոգման համակարգի կառուցում (2023 թ. հավանության արժանացած սուբվենցիա, ավարտվել է 2024-ին)։ Ենթածրագրի ընդհանուր արժեքը՝ 41 մլն դրամ է (30% կառավարություն, 70% համայնք)։ Կանաչ տարածքների կայուն ոռոգման նպատակով անցկացվել է նոր պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ՝ **2.900 գծ.մ երկարությամբ՝** կենտրոնական հրապարակից մինչև Երևանյան փողոց՝ ընդգրկելով նաև Աբովյան և Սայաթ-Նովայի փողոցների որոշ հատվածներ։

Նպատակ 3. քաղաքային միջավայրի էկոլոգիական հավասարակշռության ապահովում և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում։

Իրականացված ծրագիր. Շատրվանի վերակառուցման շրջանակներում կառուցվել է ժամանակակից ջրահեռացման համակարգ՝ բետոնե առվակով (26.85 քմ) և խողովակներով (554.5 գծամետր), ինչը թույլ է տալիս կանխել ջրային կորուստները և ապահովել տարածքի պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակը։

Նպատակ 4. բնապահպանական և կանաչ ներդրումների իրականացման ընթացքում թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

Մոնիթորինգը գնահատում է վերոնշյալ ծրագրերի (ընդհանուր շուրջ 210,5 մլն դրամի ներդրում) նպատակային իրականացումը և դրանց համապատասխանությունը համայնքի բնակիչների իրական էկոլոգիական կարիքներին:

Նպատակ 5. կանաչ տարածքների պահպանման ուղղությամբ համայնքային վերահսկողության ուժեղացում և հանրային մասնակցության խթանում

Նոր ենթակառուցվածքների (2.900 մետր նոր ջրագիծ և կենտրոնական հանրային տարածքներ) կառուցումից հետո էական է դառնում քաղաքացիական հետևողական վերահսկողությունը՝ դրանց հետագա անխափան շահագործումն ու խնամքը երաշխավորելու համար:

Օգտագործված մեթոդները և գործիքները

Արմավիր համայնքում կանաչ տարածքների պահպանման, ընդլայնման և սուբվենցիոն ծրագրերի արդյունավետության քաղաքացիական մոնիթորինգն իրականացնելու համար կիրառվել են տվյալների հավաքագրման և վերլուծության մի շարք փոխլրացնող մեթոդներ ու գործիքներ: Ի թիվս այս մեթոդների, իրակացվել է նաև քանակական հարցումներ և հանրային կարծիքի վերլուծություն: Համայնքի բնակիչների դիրքորոշումը, գոհունակության մակարդակը և առաջնահերթությունները բացահայտելու նպատակով իրականացվել է հարցում: 2026 թվականի մայիս-հունիս ամիսներին անցկացված հարցման տվյալների վերլուծությունը թույլ է տվել դուրս բերել հետևյալ ցուցանիշները.

- Թիրախային խումբ. հարցմանը մասնակցել են հիմնականում երիտասարդներ (մինչև 18 և 18-25 տարեկան), ինչպես նաև միջին ու ավագ տարիքի բնակիչներ:
- Իրավիճակի գնահատում. ճնշող մեծամասնությունը նշել է, որ կանաչ տարածքների պահպանումը «շատ կարևոր է» քաղաքի համար: Չնայած բնակիչների մեծ մասը նկատել է, որ վիճակը վերջին շրջանում «բարելավվել է», հստակ արձանագրվել են առկա հիմնախնդիրները:
- Առանցքային մարտահրավերներ. որպես կանաչ գոտիների վատթարացման գլխավոր պատճառներ բնակիչները նշել են աղբի առկայությունը, ոռոգման համակարգի բացակայությունը

կամ խնդիրները, խնամքի պակասը, բնակիչների անփույթ վերաբերմունքը և կառուցապատումը կանաչ գոտիների հաշվին:

- Առաջնահերթ տարածքներ. բնակիչների կողմից առավել հաճախ մատնանշվել են բարեկարգման և կանաչապատման կարիք ունեցող բակային տարածքները, փողոցներն ու մայթերը, ինչպես նաև դպրոցների շրջակայքը:
- Քաղաքացիական առաջարկներ. հարցվածների կողմից հնչել են արժեքավոր լուծումներ, ինչպիսիք են՝ արդյունավետ ոռոգման համակարգերի անցկացումը, բնակիչների շրջանում իրազեկվածության սեմինարների և կամավորական շաբաթօրյակների կազմակերպումը, տեղական տուգանքների և խստապահանջության մեխանիզմների կիրառումը, ինչպես նաև բնակիչների միջև բակերի կանաչապատման մրցույթների անցկացումը:

Զեկույցի համար իրականացվել է շրջակա միջավայրի ցուցանիշների վերլուծություն: Իրականացվել է փաստացի էկոլոգիական և աշխարհագրական տվյալների համադրում (կիսաանապատային գոտու ազդեցությունը, ստորերկրյա ջրերի մակարդակի անկումը, 600 հա անտառների պատմական հատումները և ջրային ռեսուրսների 60/40 հարաբերակցությունը Արմավիրի մեծ ջրանցքի ու արտեզյան հորերի միջև):

Քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունը

Արմավիր քաղաքում շրջակա միջավայրի և կանաչապատման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բնակչության ներգրավվածությունը կրում է հիմնականում մասնակի բնույթ, սակայն առկա է հանրային և քաղաքացիական բարձր պատրաստակամություն:

Կան արդյոք հանրության մասնակցության մեխանիզմներ. Արմավիր համայնքում հանրության մասնակցության հիմնական մեխանիզմներից մեկը, որը կիրառվել է նաև սույն մոնիթորինգի շրջանակներում, **առցանց հարցումների և թվային հարթակների** միջոցով կարծիքների հավաքագրումն է: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչները մեծապես կարևորում են իրենց մասնակցությունը. նրանց ճնշող մեծամասնությունը լիովին համաձայն է, որ համայնքի էկոլոգիական խնդիրները պետք է լուծվեն հանրային վերահսկողության ներքո: Որպես մասնակցության նոր մեխանիզմներ՝ բնակիչներն իրենք առաջարկում են ներդնել թաղամասային կամ միջշենքային կանաչապատման մրցույթներ և իրազեկման սեմինարներ:

Կազմակերպվե՞լ են հանրային խորհրդակցություններ ընտրված

նախագծերի համար. հարցման տվյալների համաձայն՝ բնակիչների զգալի մասը նշում է, որ որոշումների կայացմանը կամ նախագծերի քննարկումներին մասնակցում են միայն **«մասամբ»** կամ ընդհանրապես տեղեկացված չէ պաշտոնական հանրային խորհրդակցություններից: Սա վկայում է այն մասին, որ չնայած խոշոր սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել (ոռոգման համակարգ, շատրվաններ), ՏԻՄ-երի կողմից բուն հանրային լսումների կամ խորհրդակցությունների ձևաչափը դեռևս բավարար չափով հասանելի և թափանցիկ չէ բոլոր քաղաքացիների համար:

Երիտասարդները ներգրավված ե՞ն այս գործընթացներում, թե ոչ. այս ուղղությամբ հարցումն արձանագրել է ամենաբարձր ակտիվությունը.

- **Ակտիվ ներգրավվածություն հարցումներում.** հարցմանը մասնակցած բնակիչների ճնշող մեծամասնությունը կազմել են **երիտասարդները (մինչև 18 և 18-25 տարեկան)**: Սա փաստում է, որ երիտասարդներն ամենաբարձր հետաքրքրվածությունն ունի քաղաքի բնապահպանական հարցերի նկատմամբ:
- **Պատրաստակամություն և գործնական առաջարկներ.** երիտասարդները ոչ միայն արձանագրում են խնդիրները (աղբ, խնամքի պակաս), այլև հանդես են գալիս կոնկրետ նախաձեռնություններով: Մասնավորապես, մինչև 18 տարեկանների խմբի պատասխաններում շեշտվել է **միասնական ծառատունկերի**, կամավորական կազմակերպությունների միջոցով **աղբահավաք-խաղերի** և բնության պաշտպանության սեմինարների կազմակերպման անհրաժեշտությունը:
- **Բակերի և թաղամասերի ակտիվություն.** 18-25 տարեկան երիտասարդների կողմից առաջարկվել է երիտասարդական ուժերով բնակելի թաղամասերում և բակային տարածքներում ստեղծել փոքր, հասանելի կանաչ այգիներ ու պուրակներ, որոնք հարմար կլինեն առօրյա հանգստի համար:

Ամփոփում. Արմավիրի երիտասարդությունը պատրաստ է և ձգտում է ներգրավվել տեղական նախաձեռնություններում (ծառատունկեր, շաբաթօրյակներ): Սակայն, ՏԻՄ մակարդակում պաշտոնական որոշումների կայացման մեջ նրանց ձայնը լսելի դարձնելու համար կա հանրային խորհրդակցությունների մեխանիզմների բարելավման խիստ անհրաժեշտություն:

Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներ

ՑՈՒՑԻՉ	ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ	ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Կանաչ տարածքների ընդհանուր մակերես	Քաղաքի ընդհանուր կանաչ ֆոնդը ներառում է Կենտրոնական զբոսայգին, շուրջ **4 հա** մակերես զբաղեցնող պուրակները, կայանամերձ հատվածները, Մարզպետարանի և Համայնքապետարանի հարակից կանաչ գոտիները, ինչպես նաև մոտ **2 հա** տարածք զբաղեցնող բուսաբանական և կենդանական այգիները:	Մասնագիտական խորհրդատվություն (Աշոտ Գրիգորյան)
Ոռոգման ենթակառուցվածքների հագեցվածություն	Քաղաքում անցկացվել է **2.900 գծամետր** երկարությամբ նոր պոլիէթիլենային ոռոգման ջրագիծ (Հանրապետության փողոցում): Ոռոգման ջրի մատակարարման հարաբերակցությունը կազմում է՝ **60%** Արմավիրի մեծ ջրանցքով (որը հիմնականում սպառվում է գյուղերի կողմից) և **40%**՝ 10 գործող արտեզյան հորերով:	ՀՀ ՏԿԵ նախարարության սուբվենցիոն հաշվետվություններ և Աշոտ Գրիգորյանի փորձագիտական տվյալներ
Օդի որակ և միկրոկլիմա (Խոնավություն)	Քաղաքը գտնվում է չոր կիսաանապատային գոտում: Էներգետիկ ճգնաժամի տարիներին շուրջ **600 հա** անտառների հատման հետևանքով նկատվում է օդի հարաբերական խոնավության անկում և ստորերկրյա ջրերի մակարդակի նվազում: Օդի միկրոկլիմայի բարելավման համար կենտրոնում վերակառուցվել է **91.42 քմ** մակերեսով նոր շատրվան:	Մասնագիտական խորհրդատվություն (Աշոտ Գրիգորյան) և Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական տվյալներ
Բնակչության գոհունակություն և մաքրության մակարդակ	Բնակիչների մեծ մասը նկատում է կանաչապատման վիճակի որոշակի բարելավում, սակայն որպես էկոլոգիական որակի գլխավոր խոչընդոտներ արձանագրվում են **տարածքների աղբոտվածությունը**, խնամքի պակասը և բակային տարածքներում կանաչապատման ցածր մակարդակը:	Հանրային հարցման արդյունքներ:

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքներ

Արմավիր համայնքի կանաչապատման, ոռոգման ենթակառուցվածքների և սուբվենցիոն ծրագրերի քաղաքացիական մոնիթորինգը թույլ է տվել դուրս բերել մի շարք առանցքային արդյունքներ ու փաստարկներ.

Փաստաթղթերի և տվյալների վերլուծության արդյունքում ստացված դիտարկումները

Էկոլոգիական ճգնաժամի հետևանքներ. փաստաթղթային և փորձագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ պատմականորեն 600 հա անտառների հատումը խորը հետք է թողել քաղաքի միկրոկլիմայի վրա՝ հանգեցնելով օդի խոնավության նվազման և ստորերկրյա ջրերի անկման:

Ջրային ռեսուրսների անհամամասնություն. չնայած քաղաքն ունի ոռոգման բազմաթիվ աղբյուրներ (Թալինի ջրանցք, Ախուրյանի ջրամբար, Մայր առու, Ստորին Հրազդանի ջրանցք և 10 արտեզյան հորեր), ռեսուրսների բաշխումն անհավասար է: Մասնավորապես, Արմավիրի մեծ ջրանցքի ջրերի 60%-ը հիմնականում սպառվում է հարակից գյուղերի կողմից, ինչի պատճառով քաղաքի կանաչ տարածքները մնում են 40% արտեզյան ջրերի հույսին:

Նշված ներդրումների իրականացումը ծրագրերի համաձայն

Ուսումնասիրված խոշոր սուբվենցիոն ներդրումները (Հանրապետության փողոցի 2.900 գծամետր ոռոգման ջրագիծը և Կենտրոնական հրապարակի լուսաձայնային շատրվանը) իրականացվել և ավարտվել են նախատեսված պլանների համաձայն: Այս ներդրումները տեխնիկապես լուծել են կենտրոնական հատվածի կայուն ջրամատակարարման խնդիրը, սակայն դեռևս բաց է մնում դրանց երկարաժամկետ արդյունավետության և սպասարկման հարցը:

Պետական և տեղական մարմինների թափանցիկության մակարդակը

ՏԻՄ և համայնքային կառույցների թափանցիկության ու համագործակցության մակարդակը գնահատվում է բավարար: «Կանաչապատում» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել տեղեկատվություն տրամադրել իրականացվող աշխատանքների վերաբերյալ, ինչը հնարավորություն է տվել հստակեցնել կառույցի ընթացիկ քայլերը քաղաքի կանաչ ֆոնդի (4 հա պուրակներ, 2 հա բուսաբանական այգի) պահպանման ուղղությամբ: Այդուհանդերձ, առկա է բյուջետային ծախսերի և ընթացիկ խնամքի պլանների առավել հանրամատչելի հրապարակայնացման կարիք:

Քաղաքացիների ներգրավվածության աստիճանը որոշումների կայացման գործընթացներում

Ցածր ինստիտուցիոնալ ներգրավվածություն. բնակիչների շրջանում իրականացված հարցումները փաստում են, որ նրանք հիմնականում միայն «մասամբ» են ներգրավված պաշտոնական որոշումների կայացման մեջ կամ տեղեկացված չեն հանրային լսումներից:

Բարձր քաղաքացիական ներուժ. Թեև ՏԻՄ որոշումների հետ քաղաքացիների կապը թերի է, սակայն քաղաքացիները (հատկապես երիտասարդությունը), բնապահպանական բարձր գիտակցություն ունի: Նրանք պատրաստ են անձամբ մասնակցել ծառատունկերին, շաբաթօրյակներին և առաջարկում են բակային տարածքների կանաչապատման այլընտրանքային մեխանիզմներ:

Շրջակա միջավայրի քաղաքականության վերաբերյալ այլ համապատասխան եզրակացություններ

Խնամքի և աղբի հիմնախնդիր. միայն ենթակառուցվածքների կառուցումը (խողովակներ, շատրվաններ) բավարար չէ. բնակիչները որպես կանաչ գոտիների վատթարացման գլխավոր պատճառներ նշում են կենցաղային աղբի առկայությունը, հետևողական խնամքի պակասը և կանաչ տարածքների հաշվին իրականացվող կառուցապատումը:

Ստրատեգիական մոտեցման անհրաժեշտություն. քաղաքի չորկլիմայական պայմաններում անհրաժեշտ է անցում կատարել չորադիմացկուն ծառատեսակների ընտրությանը, վերականգնել դենդրոֆլորան և խիստ վերահսկողություն սահմանել ստորերկրյա արտեզյան ջրերի սպառման նկատմամբ՝ էկոլոգիական հավասարակշռությունը չխախտելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Որոշումների կայացման մեջ երիտասարդների ներգրավման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում

Առաջարկություն. համայնքապետարանին կից ստեղծել «Երիտասարդական էկո-խորհուրդ» կամ պարբերական դարձնել բաց դռների օրերը, որտեղ երիտասարդները հնարավորություն կունենան ուղղակիորեն ներկայացնել իրենց բնապահպանական նախագծերը: Քանի որ հարցումները ցույց են տվել երիտասարդության բարձր պատրաստակամությունն ու ակտիվությունը, ՏԻՄ-ը պետք է օգտագործի այս ներուժը և նրանց ձայնը լսելի դարձնի համայնքային կանաչապատման ծրագրերի պլանավորման փուլում:

2. Բակային և միջշենքային տարածքների կանաչապատման խթանում

Առաջարկություն. ծրագրային և բյուջետային առաջնահերթություն տալ բնակելի թաղամասերի և բակերի բարեկարգմանը, ինչը հանրության կողմից կարևորվել է: Առաջարկվում է ներդնել «Լավագույն կանաչ բակ» կամ «Ամենամաքուր թաղամաս» ամենամյա համայնքային մրցույթները, որտեղ հաղթող բակերին համայնքապետարանը կաջակցի նոր տնկիների, ոռոգման պարագաների կամ խաղահրապարակների տրամադրմամբ՝ խրախուսելով բնակիչների հոգատար վերաբերմունքը:

3. Թափանցիկության բարձրացում և կանաչապատման բյուջեի/ծրագրերի հանրայնացում

Առաջարկություն. համայնքապետարանի պաշտոնական կայքում և սոցիալական էջերում հրապարակել հանրամատչելի «Կանաչ քարտեզ» և հաշվետվություններ, որտեղ բնակիչները հստակ կտեսնեն, թե որ փողոցներում են պլանավորվում ծառատունկեր, որտեղ է անցկացվում նոր ոռոգման ջրագիծ և որքան բյուջե է հատկացված դրանց: Սա կլուծի հարցվածների կողմից նշված «տեղեկատվության պակասի» և մասնակի ներգրավվածության խնդիրը:

4. Ռազմավարական անցում չորադիմացկուն դենդրոֆլորայի և խիստ ջրային վերահսկողության

Առաջարկություն. «Կանաչապատում» ՊՈԱԿ-ի կողմից ծառատունկերի իրականացման ժամանակ առաջնորդվել բացառապես չորադիմացկուն և տեղական կլիմային հարմարված ծառատեսակների ընտրությամբ: Հաշվի առնելով կիսաանապատային գոտու գործոնը և ստորերկրյա ջրերի անկումը՝ անհրաժեշտ է սահմանել խիստ վերահսկողություն գործող 10 արտեզյան հորերի շահագործման նկատմամբ և աստիճանաբար

անցնել կանաչ գոտիների կաթիլային ոռոգման համակարգերին՝ ջրային ռեսուրսների կորուստը նվազեցնելու նպատակով:

5. **Հանրային իրազեկման և վերահսկողության (տուգանքների) մեխանիզմների համադրում**

Առաջարկություն. Քանի որ բնակիչները որպես հիմնական մարտահրավերներ նշել են կենցաղային աղբն ու անփույթ վերաբերմունքը, ՏԻՄ-ը պետք է իրականացնի երկկողմանի քաղաքականություն.

- Կազմակերպել կրթական սեմինարներ և էկո-շաբաթօրյակներ դպրոցների ու երիտասարդական կազմակերպությունների հետ համատեղ:
- Խստացնել վարչական պատասխանատվությունն ու տեղական տուգանքների կիրառումը կանաչ տարածքներն աղտոտողների կամ ծառերը վնասողների նկատմամբ, ինչը բարձրացրել է նաև հանրությունն իր պատասխաններում:

ՉԵԿՈՒՅՑ

4

ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Վաղարշապատ, Արմավիրի մարզ

Զեկույցի հեղինակներ՝

Լիլիթ Ներսեսյան
Էլմիրա Նիկողոսյան
Սոֆյա Մկրտչյան

Մենթոր՝ Հռիփսիմե Ավչյան

Մոնիթորինգն իրականացվել է Վաղարշապատ համայնքում՝ ուսումնասիրելու օդի աղտոտվածության ներկայիս վիճակը և դրա կառավարման գործընթացները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Վաղարշապատ համայնքում վերջին տարիներին նկատվում է տրանսպորտային հոսքերի աճ և շինարարական աշխատանքների ակտիվացում, որոնք նպաստում են օդի աղտոտվածության բարձրացմանը: Միաժամանակ համայնքում կանաչ տարածքների սահմանափակ առկայությունը նվազեցնում է օդի ինքնամաքրման հնարավորությունները: Համայնքում օդի որակի վերաբերյալ համակարգված տվյալների հասանելիությունը սահմանափակ է և թեման բավարար չափով չի բարձրաձայնվում՝ հաճախ դուրս մնալով հանրային քննարկումների շրջանակից: Այս հանգամանքները դարձնում են օդի աղտոտվածության հարցը կարևոր և արդիական ուսումնասիրության համար:

Թեման ընտրվել է քաղաքացիական մոնիթորինգի համար՝ հաշվի առնելով օդի աղտոտվածության էական ազդեցությունը բնակչության առողջության, կյանքի որակի, շրջակա միջավայրի և համայնքի կայուն զարգացման վրա: Միաժամանակ ուսումնասիրությունը նպատակ ունի գնահատելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող բնապահպանական քաղաքականությունների և օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունն ու արդիականությունը:

Մոնիթորինգի հիմնական նպատակն է գնահատել օդի աղտոտվածության ներկա իրավիճակը Վաղարշապատ համայնքում, բացահայտել աղտոտման հիմնական աղբյուրներն ու դրանց ազդեցությունը, ինչպես նաև ուսումնասիրել համայնքի բնակիչների, հատկապես երիտասարդների, իրազեկվածության և ներգրավվածության մակարդակը տվյալ խնդրի վերաբերյալ: Բացի այդ, մոնիթորինգը միտված է բարձրացնելու խնդրի հանրային տեսանելիությունը, խթանելու փաստահեն հանրային քննարկումները և նպաստելու առավել արդյունավետ, թափանցիկ ու մասնակցային բնապահպանական քաղաքականությունների ձևավորմանը և իրականացմանը համայնքում:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի մոնիթորինգ

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի անվանումը՝ Վաղարշապատ համայնքապետարան

Հաստատության պատասխանատվության ոլորտը՝ Շրջակա միջավայրի պահպանություն, կանաչապատում, համայնքային բարեկարգում, բնակարանային-կոմունալ ոլորտ:

Մոնիթորինգին մասնակցած ներկայացուցիչները՝

- Հովհաննես Գնոյան, «Բարեկարգում և կանաչապատում» բաժին
- Վիլեն Ավետիսյան, «Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանություն» բաժին
- Գևորգ Գրիգորյան, «Բնակարանային կոմունալ վարչություն» բաժին,
- Նարեկ Վարդանյան, «Բարեկարգում» տնօրինություն
- Նիկոլայ Նիկողոսյան, «Բարեկարգում» տնօրինություն

Վաղարշապատ համայնքապետարանի համապատասխան բաժինների ներկայացուցիչներն ընտրվել են մոնիթորինգի համար, քանի որ նրանց գործունեությունն անմիջականորեն առնչվում է համայնքի կանաչապատման, շրջակա միջավայրի պահպանության, բարեկարգման և բնակարանային-կոմունալ ոլորտների կառավարմանը:

Մոնիթորինգի ընթացքում ներկայացուցիչները տրամադրել են տեղեկատվություն համայնքում իրականացվող ծառատնկման աշխատանքների, աղբավայրերի կառավարման, բակային տարածքների բարեկարգման և նախատեսվող բնապահպանական ծրագրերի վերաբերյալ: Նշվել է, որ համայնքում օդի աղտոտվածության վերահսկմամբ զբաղվող առանձին բաժին չկա, իսկ օդի որակի չափումները համայնքապետարանի լիազորությունների շրջանակում չեն: Տեղեկացվել է նաև, որ համայնքում ներկայումս օդի աղտոտվածության չափման կայանի ձեռքբերում նախատեսված չէ:

ՏԻՄ ներկայացուցիչները ներկայացրել են համայնքում իրականացվող և նախատեսվող բարեկարգման ծրագրերը, քաղաքացիների ներգրավվածության մեխանիզմները, ինչպես նաև համագործակցության պատրաստակամություն են հայտնել երիտասարդների կողմից ներկայացվելիք առաջարկությունների և հետագա քննարկումների համար:

Քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունը

Վաղարշապատ համայնքում շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունն ապահովվում է տարբեր մասնակցային մեխանիզմների միջոցով: Համայնքապետարանը հետևողական աշխատանք է տանում բնակիչների կարիքներին և առաջարկություններին արձագանքելու ուղղությամբ՝ փորձելով համայնքային զարգացման ծրագրերը կազմակերպել բնակիչների ներգրավվածությամբ:

Համայնքում գործում են հանրության մասնակցության տարբեր մեխանիզմներ, այդ թվում՝ հանրային խորհրդակցություններ, համայնքային

հանդիպումներ, ինչպես նաև առցանց հաղորդակցության հարթակներ: Համայնքապետարանի պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի միջոցով պարբերաբար հրապարակվում են համայնքային ծրագրեր, զարգացման նախագծեր և որոշումներ, որոնց վերաբերյալ քաղաքացիները կարող են ներկայացնել առաջարկություններ և դիտարկումներ:

Երիտասարդների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ բաց հարցերի պատասխաններում մասնակիցները ներկայացրել են մի շարք առաջարկություններ, որոնք հիմնականում ուղղված են համայնքի բնապահպանական վիճակի բարելավմանը: Ամենահաճախ նշված առաջարկներից էին ծառատնկման և կանաչապատման ծրագրերի իրականացումը, աղբի այրման արգելումը, շինարարական փոշու վերահսկողության ուժեղացումը, ավտոմեքենաների արտանետումների նվազեցումը, թափոնների վերամշակման համակարգի զարգացումը, ինչպես նաև բնապահպանական թեմաներով հանրային իրազեկման արշավների կազմակերպումը:

Պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքում կան ակտիվ քաղաքացիներ և երիտասարդներ, որոնք պատրաստ են ներգրավվել բնապահպանական նախաձեռնություններում և մասնակցել համայնքային խնդիրների լուծմանը: Մասնակիցների մի մասը նշել է, որ պատրաստ է մասնակցել կամավորական ծառատնկման, մաքրման և իրազեկման աշխատանքներին, ինչը վկայում է համայնքում քաղաքացիական մասնակցության և բնապահպանական պատասխանատվության ձևավորման կարևոր նախադրյալների մասին:

Միաժամանակ, իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում համայնքի բնակիչների և երիտասարդների ներգրավվածությունը դեռևս ամբողջությամբ բավարար մակարդակի վրա չէ: Այդուհանդերձ, քաղաքացիական մոնիթորինգի և երիտասարդական ծրագրերը կարևոր հնարավորություն են ստեղծում բարձրացնելու հանրային մասնակցությունը, խթանելու համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ և ձևավորելու հանրային վերահսկողության ու մասնակցային կառավարման մշակույթ:

Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներ

ՑՈՒՑԻՉ	ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ	ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Օդի որակ	Վաղարշապատ համայնքում օդի որակի վերաբերյալ մշտադիտարկման բաց հասանելի տվյալները սահմանափակ են: Հայաստանի մակարդակով օդի աղտոտվածության հիմնական աղբյուր են հանդիսանում տրանսպորտային միջոցները, շինարարությունը և արդյունաբերական արտանետումները:	ՀՀ Հաշվեքննիչ պալատի զեկույց (2025)
Թափոնների կառավարում	Արմավիրի մարզում սանիտարական աղբավայրի բացակայությունը շարունակում է մնալ բնապահպանական խնդիր: Համայնքի աղբի վերջնակետը Ծահումյան գյուղն է: Թափոնների ոչ պատշաճ կառավարումը կարող է բացասաբար ազդել շրջակա միջավայրի և օդի որակի վրա:	Հաշվեքննիչ պալատ. Օդի աղտոտվածության նվազեցում (Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի ապրիլի 15-ի N 27-Ա որոշմամբ)

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքներ

Ներկայումս օդի աղտոտվածությունը համարվում է ժամանակակից աշխարհի ամենալուրջ բնապահպանական մարտահրավերներից մեկը:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ օդի աղտոտվածությունը մթնոլորտում այնպիսի նյութերի առկայությունն է, որոնք վնասակար ազդեցություն են ունենում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:

Մեկ այլ աղբյուրի դիտարկմամբ օդի աղտոտվածությունը վնասակար գազերի, քիմիական նյութերի և պինդ մասնիկների խառնուրդ է, որոնք առաջանում են ինչպես բնական, այնպես էլ մարդածին աղբյուրներից:

Օդի հիմնական աղտոտիչներից են մանր փոշային մասնիկները (PM2.5 և PM10), ազոտի երկօքսիդը (NO_2), ծծմբի երկօքսիդը (SO_2), ածխածնի մոնօքսիդը (CO) և գետնամերձ օզոնը (O_3) և այլն: Սրանք հանդիսանում են հանրային առողջության համար առավել վտանգավոր աղտոտիչներ և

օդի որակի գնահատելիս ստուգվում են, որ վերոնշյալ աղտոտիչները լինեն սահմանային թույլատրելի կոնցենտրացիայում: Սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ), գերազանցումը նշանակում է որ օդում վնասակար նյութերի քանակը անցել է ընդունելի մակարդակը և կարող է առաջացնել առողջական տարբեր խնդիրներ:

Հայաստանում մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների համաձայն՝ աշխարհի բնակչության շուրջ 99%-ը շնչում է օդ, որի որակը չի համապատասխանում սահմանված ուղեցույցներին, ընդ որում՝ առավել բարձր աղտոտվածության ազդեցության տակ են գտնվում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրները:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած տեղեկության՝ PM2.5 մասնիկները համարվում են առավել վտանգավոր առողջության համար, քանի որ իրենց չափերի փոքր լինելու պատճառով կարող են ներթափանցել շնչառական համակարգի խորքային հատվածներ և նույնիսկ հասնել արյան շրջանառությանը: PM10 մասնիկները ևս վտանգավոր են, քանի որ դրանց կազմի մեջ կարող են լինել տարբեր թունավոր և քաղցկեղածին նյութեր, այդ թվում՝ ծանր մետաղներ, դիօքսիններ և բենզոպիրեն:

ՀՀ Հաշվեքննիչ պալատի «Օդի աղտոտվածության նվազեցում» հրապարակած զեկույցի համաձայն՝ մարդու առողջության վրա օդի աղտոտվածության հասցրած վնասի տնտեսական արժեքը աշխարհում գնահատվում է տարեկան շուրջ 8.1 տրիլիոն ԱՄՆ դոլար, ինչը համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 6.1%-ն է: Նույն զեկույցի տվյալներով Հայաստանում մթնոլորտային օդի աղտոտվածությանը վերագրվող մահերի ցուցանիշը (70 մահ 100,000 բնակչի հաշվով) համաշխարհային միջինից բարձր է 19%-ով, իսկ միջին եվրոպականից՝ 2.6 անգամ և այդ ցուցանիշով Հայաստանը 183 երկրների շարքում 144-րդն է:

Ներկայացված տվյալները և նյութերը վկայում են, որ օդի աղտոտվածության հիմնախնդիրը սպառնում է գրեթե ողջ աշխարհին, դառնալով լուրջ բնապահպանական և առողջապահական մարտահրավեր: Հայաստանում օդի աղտոտվածության թեման հետազոտողների կողմից հիմնականում ուսումնասիրվում է մայրաքաղաք Երևանում կամ այնպիսի մարզերում, որտեղ առկա են արդյունաբերական ձեռնարկություններ և արձանագրված է բարձր աղտոտվածության մակարդակ: Կարևոր է նշել, որ մինչ այժմ Վաղարշապատ համայնքում չի իրականացվել մոնիթորինգ պարզելու

համար՝ ինչ վիճակում է գտնվում համայնքում օդի աղտոտվածության վիճակը:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Գայանե Շահնազարյանի և ՄՕՈՄ ծառայության պետ Գոհար Հակոբյանի հետ խորքային հարցազրույցից պարզ դարձավ, որ Հայաստանում մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացվում է ստացիոնար և շարժական դիտակետերի միջոցով: Հանրապետությունում գործում են 15 ստացիոնար դիտակայաններ, որոնք տեղակայված են Երևանում և մի շարք այլ քաղաքներում՝ Վանաձորում, Ալավերդիում, Գյումրիում, Արարատում, Հրազդանում, Կապանում և Չարենցավանում: Բացի այդ, Ամբերդի տարածաշրջանային կայանում իրականացվում են դիտարկումներ՝ անդրսահմանային աղտոտվածության գնահատման նպատակով: Ստացիոնար դիտակայաններին զուգահեռ գործում են նաև 191 պասիվ դիտակետեր:

Օդի որակի գնահատման գործընթացում կիրառվում են ակտիվ և պասիվ մոնիթորինգի մեթոդներ: Ակտիվ մեթոդի դեպքում նմուշառումն իրականացվում է 24-ժամյա ռեժիմով, իսկ պասիվ մեթոդի դեպքում նմուշառիչները տեղադրվում են 7 օրով: Պասիվ մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու ազոտի երկօքսիդի (NO_2) և ծծմբի երկօքսիդի (SO_2) կոնցենտրացիաները, մինչդեռ ակտիվ մեթոդի միջոցով որոշվում են նաև փոշու մասնիկները և գետնամերձ օզոնը:

Օդի որակի մոնիթորինգը ներառում է երեք հիմնական փուլ՝ նմուշառում, լաբորատոր հետազոտություն և տվյալների մշակում: Նմուշառման ընթացքում համապատասխան սարքավորումների միջոցով հավաքվում են օդի նմուշներ, որոնք հետագայում ենթարկվում են լաբորատոր վերլուծության: Ստացված արդյունքները համադրվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների հետ, ինչը հնարավորություն է տալիս գնահատել օդի աղտոտվածության մակարդակը:

Մթնոլորտային օդի որակի գնահատման նպատակով Վաղարշապատ համայնքում, որտեղ մշտադիտարկման կայաններ առկա չեն, օդի որակի գնահատումն իրականացվեց պասիվ նմուշառման մեթոդով:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված պասիվ նմուշառման արդյունքների համաձայն՝ ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին օրական կոնցենտրացիան կազմել է 0.0262 մգ/մ^3, իսկ ազոտի երկօքսիդինը (NO_2)՝ 0.0137 մգ/մ^3: Այս արժեքները համեմատվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների հետ, որոնք համապատասխանաբար կազմում են 0.05 մգ/մ^3 (SO_2) և 0.04 մգ/մ^3 (NO_2):

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված երկու

աղտոտիչների կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանային թույլատրելի նորմերը, ինչը վկայում է, որ տվյալ ժամանակահատվածում և տվյալ նմուշառման կետում օդի որակը նշված ցուցանիշների մասով գտնվել է թույլատրելի սահմաններում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ պասիվ մոնիթորինգի արդյունքները արտացոլում են միայն նմուշառիչի տեղադրման վայրի մասին տվյալներ և չեն կարող դիտարկվել որպես համայնքի օդի որակի ամբողջական գնահատման հիմք: Օդի որակի ավելի ճշգրիտ և երկարաժամկետ գնահատման համար անհրաժեշտ է շարունակական մշտադիտարկման համակարգի ներդրում, ինչպես նաև չափումների իրականացում համայնքի տարբեր հատվածներում:

Վաղարշապատ համայնքում օդի աղտոտվածության խնդիրը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝ տրանսպորտը, շինարարական աշխատանքները, գյուղատնտեսությունը, վառելիքի օգտագործումը, աղբի այրումը և ոչ բավարար ասֆալտապատված ճանապարհները, ինչպես նաև օդի որակի վրա կարող են ազդեցություն ունենալ այլ տարածքներից ներթափանցող աղտոտիչները:

Հարցազրույցների ընթացքում արձանագրվել է, որ համայնքում օդի աղտոտվածությունը որոշ չափով կրում է սեզոնային բնույթ: Ձմռան ամիսներին, հատկապես նոյեմբերից փետրվար ընկած ժամանակահատվածում, օդի լճացման հետևանքով աղտոտիչների կուտակման հավանականությունը մեծանում է: Այս երևույթը պայմանավորված է նաև Արարատյան դաշտի աշխարհագրական առանձնահատկություններով, որոնք որոշ դեպքերում սահմանափակում են օդային զանգվածների ազատ տեղաշարժը:

Մասնագետները նշել են, որ եղանակային պայմանները նույնպես ազդում են օդի որակի վրա: Անձրևը, ձյունը և քամին նպաստում են օդի մաքրմանը, մինչդեռ անբարենպաստ պայմաններում աղտոտիչները կարող են կուտակվել մթնոլորտում:

Վերոնշյալ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ օդի աղտոտվածության նվազեցման համար շատ կարևոր են կանաչապատման աշխատանքների իրականացումը, ծառերի և կանաչ տարածքների պահպանումը, տրանսպորտային միջոցներից առաջացող արտանետումների կրճատումը, ինչպես նաև թափոնների պատշաճ կառավարումը: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ օդի աղտոտվածության արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է նախ բացահայտել աղտոտման հիմնական աղբյուրները, ապահովել դրանց կանոնավոր մշտադիտարկումը և իրականացնել համապատասխան կանխարգելիչ ու կարգավորող միջոցառումներ:

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքները համայնքում

Մոնիթորինգի շրջանակում իրականացվել է հանդիպում-քննարկումներ՝ նպատակ ունենալով գնահատել Վաղարշապատ համայնքում շրջակա միջավայրի կառավարման, կանաչ տարածքների պահպանության և օդի աղտոտվածության վերահսկման ներկա վիճակը:

ՏԻՄ ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքում շրջակա միջավայրի հետ կապված գործառույթները հիմնականում իրականացվում են գյուղատնտեսության բաժնի միջոցով, սակայն օդի աղտոտվածության վերահսկման համար առանձին մասնագիտացված բաժին կամ պատասխանատու կառույց առկա չէ: Օդի որակի չափումը համայնքապետարանի լիազորությունների շրջանակում չի իրականացվում, և այն հիմնականում կատարվում է այլ կազմակերպությունների կողմից: Նշվել է նաև, որ օդի աղտոտվածության մշտադիտարկման կայանի ձեռքբերումը համայնքի առաջիկա ծրագրերում ներառված չէ:

Մոնիթորինգը ցույց է տալիս, որ համայնքում բնապահպանական հիմնական ուղղությունները կանաչապատման աշխատանքներն ու աղբահանությունն են: Ամեն տարի իրականացվում են ծառատնկման ծրագրեր, ինչպես նաև աղբավայրում հատուկ տեխնիկայի օգնությամբ կենցաղային աղբը տեղափոխվում և լցվում է փոսերը, ապա ծածկվում հողի շերտով՝ մթնոլորտի վրա վնասակար ազդեցությունը հնարավորինս նվազեցնելու նպատակով:

Համայնքում իրականացվում են մի շարք բարեկարգման ծրագրեր: Մասնավորապես, նախատեսված են 5 բակային տարածքների վերակառուցման նախագծեր, որոնք արդեն մշակվել և ուղարկվել են կառավարության հաստատմանը: Նախագծերով նախատեսվում է ավտոտնակների ապամոնտաժում և դրանց փոխարեն կանաչ գոտիների, հանգստի և խաղահրապարակների ստեղծում: Այս նախագծերը ներառում են Վաղարշապատ համայնքի Չարենց թաղամասը, Մաշտոց 59 շենքի բակային հատվածը, Բաղրամյան 18 և 20 շենքերի միջանկյալ տարածքը, Զվարթնոց թաղամասի Արագածի զանգված 1 և 3 շենքերի հատվածները, ինչպես նաև Մաշտոց 20 և 22 շենքերի բակերը:

Համայնքում օդի աղտոտվածության վերաբերյալ առանձին ծրագիր կամ ռազմավարություն առկա չէ, և այդ խնդիրը չի համարվում առաջնահերթ ուղղություն: Համայնքի 5-ամյա զարգացման ծրագրով հիմնականում նախատեսվում են պուրակների կառուցում և ընդհանուր բարեկարգման աշխատանքներ:

Քաղաքացիների մասնակցության մասով արձանագրվել է, որ համայնքում գործում են ընդունելության օրեր, հանդիպումներ և

էլեկտրոնային հարթակներ, որոնց միջոցով բնակիչները կարող են ներկայացնել առաջարկություններ: Բնակիչների ներգրավվածությունը հիմնականում սահմանափակվում է շաբաթօրյակներով և ծառատնկման նախաձեռնություններին միանալով:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության տեսանկյունից հարկ է նշել, որ համայնքապետարանը պատրաստակամ է համագործակցել և քննարկել առաջարկությունները:

Մոնիթորինգի արդյունքները փաստում են, որ համայնքում բնապահպանական քաղաքականությունը հիմնականում կենտրոնացած է կանաչապատման և բարեկարգման աշխատանքների վրա, մինչդեռ օդի որակի կառավարման և համակարգված մոնիթորինգի ուղղությամբ առկա են բացեր: Սա ընդգծում է անհրաժեշտությունը՝ զարգացնելու օդի որակի մշտադիտարկման համակարգերը, հստակեցնելու կառույցների դերաբաշխումը և ընդլայնելու քաղաքացիների մասնակցությունը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում:

Մոնիթորինգի համար իրականացվել է Վաղարշապատում օդի աղտոտվածության վերաբերյալ հարցում: Հարցումը կազմվել է Google Forms հարթակով, որին մասնակցել է 200 մարդ: Նպատակն էր ուսումնասիրել բնակիչների կարծիքն օդի որակի, աղտոտման հիմնական աղբյուրների, առողջության վրա ազդեցությունների, համայնքային արձագանքի և հնարավոր լուծումների վերաբերյալ:

Հարցման մեջ ներառվել են հարցեր, որոնք ուղղված են եղել մասնակիցների սոցիալ-դեմոգրաֆիկ տվյալների, Վաղարշապատ համայնքում օդի աղտոտվածության վերաբերյալ նրանց ընկալումների, հիմնական աղտոտման աղբյուրների, օդի որակի փոփոխությունների և առողջության վրա հնարավոր ազդեցությունների ուսումնասիրմանը: Հարցաթերթում ընդգրկվել են նաև հարցեր՝ կապված տարվա այն եղանակների հետ, երբ առավել նկատելի է օդի աղտոտվածությունը, համայնքի կողմից իրականացվող քայլերի գնահատման, ինչպես նաև բնակիչների մասնակցության պատրաստակամության վերաբերյալ: Բացի այդ, հարցման միջոցով ուսումնասիրվել է, թե անձամբ ինչպիսի բնապահպանական վարքագիծ և քայլեր են իրականացնում քաղաքացիներն օդի աղտոտվածությունը նվազեցնելու համար և ինչ առաջարկներ ունեն խնդրի լուծման ուղղությամբ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցների մեծ մասը երիտասարդներ են: Ամենամեծ խումբը կազմել են 17-19 տարեկանները՝ 40 տոկոս, ապա 25-35 տարեկանները՝ 25.5 տոկոս, 13-16 տարեկանները՝ 19.5 տոկոս, իսկ 20-24 տարեկանները՝ 15 տոկոս: Սա վկայում է, որ հարցմանը հիմնականում մասնակցել են երիտասարդները, ինչի արդյունքում

ստացված տվյալները առավելապես արտացոլում են այդ տարիքային խմբի տեսակետները:

Սեռային բաշխման համաձայն՝ մասնակիցների 72 տոկոսը եղել է իգական սեռի, իսկ 28 տոկոսը՝ արական: Սա ցույց է տալիս, որ հարցմանն ավելի ակտիվ մասնակցել են կանայք, որոնք սովորաբար ավելի զգայուն են բնապահպանական խնդիրների նկատմամբ:

Բնակության վայրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում մասնակցել են Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի բնակիչներ, սակայն հարցմանը մասնակցություն են ունեցել նաև Հայաստանի տարբեր մարզերից՝ այդ թվում Երևանից, Գյումրիից, Գորիսից և Իջևանից: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ հարցումը, չնայած իր տեղական ուղղվածությանը, ստացել է նաև ավելի լայն արձագանք:

Օդի աղտոտվածության մակարդակի վերաբերյալ հարցին, մասնակիցների 26 տոկոսը նշել է, որ այն շատ բարձր է, 29 տոկոսը՝ բարձր, իսկ 34 տոկոսը՝ միջին: Միայն 4 տոկոսն է այն գնահատել որպես ցածր: Այս տվյալները ցույց են տալիս, որ բնակիչների մեծ մասը համոզված է՝ Վաղարշապատում օդի աղտոտվածությունը լուրջ խնդիր է:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ օդի աղտոտվածության հիմնական աղբյուրը, ըստ հարցվածների, ավտոմեքենաների արտանետումներն են, որոնք նշել է մասնակիցների 69%-ը: Հաջորդ առավել հաճախ նշված գործոններն են շինարարական աշխատանքները և աղբի այրումը՝ համապատասխանաբար 64.5%-ական ցուցանիշով: Միևնույն ժամանակ, հարցվածների 32%-ը որպես օդի աղտոտման կարևոր աղբյուր առանձնացրել է նաև արտադրական ձեռնարկությունները:

Բացի հիմնական աղտոտման աղբյուրներից, մասնակիցները նշել են նաև փոշոտ փողոցները, կանաչ տարածքների անբավարար քանակը և ճանապարհային ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակը: Այս արդյունքները վկայում են, որ օդի աղտոտվածության խնդիրը պայմանավորված է ոչ միայն տրանսպորտային և արտադրական գործոններով, այլև համայնքի քաղաքաշինական, կոմունալ և բնապահպանական կառավարման առկա մարտահրավերներով:

Օդի որակի վատացման վերաբերյալ հարցին մասնակիցների 47.5 տոկոսը պատասխանել է, որ այն հաճախ է նկատվում, իսկ 43.5 տոկոսը՝ երբեմն: Այսպիսով, ընդհանուր առմամբ ավելի քան 90 տոկոսը առնվազն երբեմն զգացել է օդի որակի վատացում:

Առողջական ազդեցությունների մասով մասնակիցների 73 տոկոսը նշել է, որ օդի աղտոտվածությունն ազդում է իրենց առողջության վրա՝ առաջացնելով հազ, ալերգիա, գլխացավ և այլ խնդիրներ: Միայն փոքր մասը նշել է, որ

որևէ ազդեցություն չի զգում: Սա վկայում է, որ օդի աղտոտվածությունն արդեն դիտարկվում է ոչ միայն որպես բնապահպանական, այլ նաև առողջապահական խնդիր:

Եղանակային դիտարկումների համաձայն՝ օդի աղտոտվածությունն առավել նկատելի է ամռանը՝ 41.5 տոկոս, սա կարող է պայմանավորված լինել ամռան ընթացքում ավելացող փոշով, շինարարական ակտիվությամբ և չոր եղանակային պայմաններով:

Համայնքի կողմից իրականացվող միջոցառումների արդյունավետության գնահատման արդյունքում պարզվել է, որ միայն 6.5 տոկոսը կարծում է, թե դրանք բավարար են, մինչդեռ 34.5 տոկոսը պատասխանել է «ոչ», իսկ 38.5 տոկոսը՝ «մասամբ»: Բնակիչների մեծ մասը պատրաստակամ է մասնակցել հնարավոր լուծումներին: Մասնակիցների 50 տոկոսը նշել է «այո», իսկ 40.5 տոկոսը՝ «հնարավոր է», ինչը նշանակում է, որ շուրջ 90 տոկոսը բաց է բնապահպանական նախաձեռնություններին մասնակցելու համար: Սա կարևոր հասարակական ներուժ է, որը կարող է օգտագործվել համայնքային ծրագրերի իրականացման համար:

Բաց հարցերում մասնակիցները ներկայացրել են մի շարք առաջարկություններ՝ ծառատնկման և կանաչապատման ծրագրերի իրականացում, աղբի այրման արգելում, շինարարական փոշու վերահսկում, ավտոմեքենաների արտանետումների նվազեցում, թափոնների վերամշակման համակարգի զարգացում, ինչպես նաև հանրային իրազեկման արշավների կազմակերպում: Որոշ պատասխաններ ցույց են տալիս, որ համայնքում կան ակտիվ քաղաքացիներ, որոնք պատրաստ են ներգրավվել բնապահպանական նախաձեռնություններում:

Քաղաքացիների մասնակցության տեսանկյունից մոնիթորինգը ցույց է տվել, որ բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում համայնքների բնակիչների և երիտասարդների ներգրավվածությունը դեռևս սահմանափակ է: Միևնույն ժամանակ, քաղաքացիական մոնիթորինգի ծրագրերը հնարավորություն են ստեղծում բարձրացնելու հանրային մասնակցությունը, խթանելու համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ և ձևավորելու հանրային վերահսկողության մշակույթ:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ օդի աղտոտվածության խնդիրը պահանջում է համալիր և երկարաժամկետ մոտեցում՝ ներառելով պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիների համագործակցությունը: Առանձնահատուկ կարևորություն ունեն օդի որակի մշտադիտարկման համակարգերի զարգացումը, կանաչ տարածքների ընդլայնումը, արտանետումների վերահսկողության ուժեղացումը, հասարակական

տրանսպորտի զարգացումը և հանրային իրազեկվածության բարձրացումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Քննարկել Վաղարշապատ համայնքում օդի որակի մշտադիտարկման կայանի տեղադրման հնարավորությունները և շարունակական տվյալների հրապարակումը՝ բնակիչների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:
2. Ընդլայնել և պահպանել համայնքի կանաչ տարածքները՝ ծառատունկի, նոր պուրակների ստեղծման և առկա կանաչ գոտիների խնամքի միջոցով: Հատուկ ուշադրություն դարձնել փոշին և վնասակար մասնիկները կլանելու բարձր կարողություն ունեցող ծառատեսակների տնկմանը, օրինակ, սոսի, թեղի, հացենի, թթենի և կաղնի, որոնք կարող են նպաստել օդի որակի բարելավմանն ու համայնքի էկոլոգիական կայունության ամրապնդմանը:
3. Երիտասարդները կարող են իրականացնել կամավորական աշխատանքներ, օրինակ, աղբահավաք, ծառատունկ, սոցիալական ցանցերում օդի աղտոտվածության մասին իրազեկման արշավներ, սակայն կարևոր է համայնքի աջակցությունը:
4. Խստացնել շինարարական աշխատանքների վերահսկողությունը՝ սահմանելով փոշու և շինարարական թափոնների կառավարման հստակ պահանջներ, ինչպես նաև վերահսկելով դրանց պատշաճ իրականացումը:
5. Կազմակերպել հանրային իրազեկման արշավներ օդի աղտոտվածության ազդեցությունների, շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիապես պատասխանատու վարքագծի վերաբերյալ:
6. Քննարկել Արմավիրի մարզի համար սանիտարական աղբավայրի ստեղծման հնարավորությունը կամ աջակցել հարակից մարզերում նման ենթակառուցվածքների զարգացմանը՝ թափոնների կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
7. Զարգացնել հեծանվային և հետիոտնային ենթակառուցվածքները՝ ստեղծելով անվտանգ հեծանվային ուղիներ և հետիոտնային գոտիներ քաղաքի կենտրոնական հատվածներում: Քննարկել նաև «առանց մեքենայի օր» նախաձեռնության ներդրման հնարավորությունը՝ տրանսպորտային արտանետումների նվազեցման և բնակիչների առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով:

ՁԵԿՈՒՅՑ

5

ԳԱՎԱՌՈՒՄ ՊԼԱՍՏԻԿԻ ՍՊԱՌՈՒՄ ԵՎ ՍՆՆԴԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Գավառ, Գեղարքունիքի մարզ

Ձեկույցի հեղինակներ՝
Լիլիթ Ներսեսյան
Էլմիրա Նիկողոսյան
Սոֆյա Մկրտչյան

Մենթոր՝ Սուսաննա Խաչատրյան

Սույն մոնիթորինգն իրականացվել է Գավառ համայնքի տարածքում և ուղղված է համայնքային սննդային և պլաստիկե թափոնների կառավարման իրավիճակի ուսումնասիրությանը: Մոնիթորինգի է իրականացվել Գավառ քաղաքի հանրային տարածքները, սննդի կետերը, խանութները և երիտասարդական միջավայրերը, որտեղ առկա է պլաստիկի ակտիվ օգտագործում և ձևավորվում են սննդի թափոններ: Մոնիթորինգ իրականացվել է նաև կրթական և համայնքային հաստատություններում՝ ուսումնասիրելու պլաստիկի սպառման մակարդակը, թափոնների կառավարման առկա մեխանիզմները և բնակիչների իրազեկվածությունը բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Վերլուծվող հանրային քաղաքականության կամ բնապահպանական թեմայի արդիականության նկարագրությունը

Պլաստիկի սպառումը և սննդի թափոնների մշակումն այսօր համարվում է ամենաարդիական բնապահպանական խնդիրներից մեկը, քանի որ այն անմիջական ազդեցություն ունի շրջակա միջավայրի, մարդկանց առողջության և բնական ռեսուրսների պահպանության վրա: Միանգամյա օգտագործման պլաստիկի լայն կիրառումը հանգեցնում է աղբի ծավալների աճին, հողի և ջրային ռեսուրսների աղտոտմանը, ինչպես նաև երկարաժամկետ վնաս է հասցնում էկոհամակարգին: Միևնույն ժամանակ, սննդի թափոնների մեծ քանակը ոչ միայն տնտեսական կորուստ է, այլ նաև նպաստում է աղբավայրերում վնասակար գազերի առաջացմանը և շրջակա միջավայրի աղտոտմանը:

Գավառ քաղաքում ևս թափոնների տեսակավորման և վերամշակման մշակույթը դեռևս լիարժեք ձևավորված չէ: Այս իրավիճակը կարևորում է բնակչության իրազեկվածության բարձրացումը, պատասխանատու սպառման խթանումը և համայնքային մակարդակում բնապահպանական նախաձեռնությունների իրականացումը: Թեմայի ուսումնասիրությունն ու մոնիթորինգը հնարավորություն կտան բացահայտել առկա խնդիրները և առաջարկել ավելի արդյունավետ ու կայուն լուծումներ համայնքի համար:

Մեկանգամյա պլաստիկի օգտագործման արգելքը 2027 թվականին. տնտեսվարողների և սպառողների իրազեկվածությունն ու դիրքորոշումը

Շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական խնդիրների կարգավորման շրջանակներում 2027 թվական հունվարի 1-ից արգելվելու է պոլիէթիլենային տոպրակների և մեկանգամյա օգտագործման պլաստիկ սպասքի (բաժակներ, ափսեներ, ճողիկներ) վաճառքն ու

օգտագործումը: Այս փոփոխությունն անմիջականորեն ազդելու է հանրային սննդի, մասնավորապես՝ արագ սննդի կետերի գործունեության և սպառողների ամենօրյա վարքագծի վրա:

Սույն հետազոտության նպատակն էր գնահատել թիրախային խմբերի պատրաստվածությունը սպասվող օրենսդրական փոփոխություններին, ուսումնասիրել նրանց դիրքորոշումն այդ փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև պարզել պլաստիկին փոխարինող այլընտրանքային լուծումների հասանելիությունն ու կիրառման հնարավորությունները:

Ի թիվս օգտագործված այլ մեթոդների՝ հարցազրույց է իրականացվել շուրջ 15 անձանց հետ, որոնց թվում եղել են ինչպես տնտեսվարող սուբյեկտներ (բիզնեսի ներկայացուցիչներ/տնօրեններ), այնպես էլ քաղաքացիներ (սպառողներ):
Հիմնական հարցադրումները վերաբերել են 2027 թվականի արգելքին, պատրաստիության մակարդակին և պլաստիկը թղթով կամ այլ էկոլոգիական հումքով փոխարինելու հնարավորություններին:

Հիմնական արդյունքներ և վերլուծություն

Իրազեկվածության մակարդակը. հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցների մեծ մասը տեղեկացված չէր 2027 թվականին ուժի մեջ մտնող սահմանափակումների մասին: Այնուամենայնիվ, խնդրին ծանոթանալուց հետո բոլոր ցուցաբերեցին պատասխանատու մոտեցում և հստակ արտահայտեցին իրենց դիրքորոշումը:

Տնտեսվարող սուբյեկտների դիրքորոշումը. արագ սննդի կետերի ներկայացուցիչները հիմնականում հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ենթարկվելու ընդհանուր սահմանված կանոններին: Նրանք նշեցին, որ եթե օրենքն ուժի մեջ մտնի ուժի, իրենք կփորձեն մինչ այդ ընկած ժամանակահատվածում նախապատրաստվել փոփոխությանը: Որպես հիմնական լուծում՝ տնտեսվարողները դիտարկում են անցումն էկոլոգիապես ավելի անվտանգ փաթեթավորումների, մասնավորապես՝ թղթե տարաների և տոպրակների:

Քաղաքացիների և սպառողների արձագանքը. հասարակության կողմից արձագանքը եղել է միանշանակ դրական: Քաղաքացիները կողմ են արտահայտվել մեկանգամյա պլաստիկի կիրառումից հրաժարվելուն և դրանք թղթե տարբերակներով փոխարինելուն: Հարցվողները փաստել են, որ էկոլոգիական այլընտրանքների անցնելու կարիքն ու անհրաժեշտությունը վաղուց հասունացել է հասարակության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցկացված հարցումները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Հանրային աջակցություն. թե՛ տնտեսվարողները, թե՛ սպառողները պատրաստ են և դրական են վերաբերվում պլաստիկից հրաժարվելու գաղափարին:
2. Իրազեկման անհրաժեշտություն. քանի որ շատերը տեղյակ չեն 2027 թվականից պլաստիկի արգելի մասին, անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվական արշավներ իրականացնել:
3. Աստիճանական անցում. տնտեսվարողներին հարկավոր է ժամանակ և հստակ ուղեցույցներ՝ մինչև 2027 թվականը շուկայում առկա թղթե և այլ էկո-փոխարինիչների մատակարարման շղթաները կարգավորելու համար:

Թե ինչու է այս թեման ընտրվել քաղաքացիական մոնիթորինգի համար

Այս թեման ընտրվել է, քանի որ պլաստիկի սպառման և սննդի թափոնների կառավարման հարցերը շարունակում են կարևոր դեր ունենալ շրջակա միջավայրի պահպանության գործում: Չնայած Գավառ քաղաքում ներկայումս առկա են աղբամաններ և համայնքում մեծածավալ աղբի կուտակումների խնդիր գրեթե չի նկատվում, այնուամենայնիվ, թափոնների տեսակավորման և վերամշակման համակարգը դեռևս լիարժեք ներդրված չէ:

Պլաստիկ և սննդային թափոնները հիմնականում հավաքվում են միասին, ինչը դժվարացնում է դրանց հետագա վերամշակումը և արդյունավետ կառավարումը: Այդ պատճառով կարևոր է ուսումնասիրել, թե որքանով են բնակիչները տեղեկացված տեսակավորման մշակույթի մասին, ինչպիսի հնարավորություններ կան համայնքում բնապահպանական ավելի պատասխանատու մոտեցումներ ձևավորելու համար, և ինչ քայլեր կարող են ձեռնարկվել ապագայում՝ թափոնների տեսակավորման համակարգ ներդնելու ուղղությամբ:

Քաղաքացիական մոնիթորինգը հնարավորություն կտա գնահատել առկա իրավիճակը, բարձրացնել հանրային իրազեկվածությունը և նպաստել համայնքում ավելի կայուն ու բնապահպանական մտածողության զարգացմանը:

Մոնիթորինգը պարզել է, թե ինչպես են բնակիչները, կազմակերպությունները և հանրային սննդի կետերը կառավարում թափոնները, որքանով են նրանք

տեղեկացված տեսակավորման և վերամշակման մշակույթի մասին, ինչպես նաև բացահայտելու հիմնական խնդիրներն ու բացերը, որոնք խոչընդոտում են ավելի արդյունավետ և բնապահպանական պատասխանատու համակարգի ձևավորմանը:

Գավառ համայնքի ամսական և միջին տվյալներ ըստ՝ «Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ՍՊԸ-ի (կգ-ով) 2025-2026թթ.

Օգոստոս՝ 66.000 կգ
Սեպտեմբեր՝ 55.960 կգ
Հոկտեմբեր՝ 611.460 կգ
Նոյեմբեր՝ 570.380 կգ
Դեկտեմբեր՝ 578.310 կգ
Հունվար՝ 512.880 կգ
Փետրվար՝ 488.275 կգ
Մարտ՝ 539.780 կգ
Ապրիլ՝ 605.440 կգ
Մայիս՝ 671.220 կգ
Հունիս (մինչև հունիսի 15-ը)՝ 33.620 կգ

Միջին ամսական՝ 430.302 կգ
Միջին օրական՝ 14.343 կգ
Ընդհանուր՝ 4.733.325 կգ

Քանի որ Գավառ համայնքում աղբահանությունը չի կատարվում տեսակավորված՝ չկա առանձին տվյալ պլաստիկի քանակի վերաբերյալ:

Միաժամանակ կարևոր նպատակ է նաև գնահատել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) դերը այս գործընթացում՝ ուսումնասիրելով, թե ինչ քայլեր են իրականացվում թափոնների կառավարման բարելավման, իրազեկման բարձրացման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Սա թույլ կտա հասկանալ, թե որքանով են համայնքային քաղաքականությունները նպաստում կայուն բնապահպանական լուծումների ներդրմանը և ինչ լրացուցիչ գործողություններ կարող են անհրաժեշտ լինել:

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի մոնիթորինգ

Պետական և/կամ ՏԻՄ ներկայացուցիչի անվանումը՝ Գրիգոր Դաշտոյան, Գավառ համայնքի համայնքապետի առաջին տեղակալ
Հաստատության պատասխանատվության ոլորտ՝ Տարոն Ղազարյան, «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ

Մոնիթորինգի շրջանակում հարցազրույց է անցկացվել Գավառ համայնքի համայնքապետի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանի հետ, քանի որ նա իր պաշտոնեական լիազորությունների շրջանակում անմիջական դերակատարում ունի համայնքի կառավարման գործընթացներում, այդ թվում՝ բնապահպանական քաղաքականության, կոմունալ ծառայությունների կազմակերպման և համայնքային զարգացման ծրագրերի իրականացման համակարգման գործում:

Մոնիթորինգի շրջանակում հարցազրույց է անցկացվել նաև «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի մասնագետ Տարոն Ղազարյանի հետ, քանի որ այս կազմակերպությունն է իրականացնում է Գավառ քաղաքի աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման աշխատանքները:

Մասնագետի հետ զրույցներիվց հետ պարզել ենք համայանքում աղբահանության արդյունավետությունը, առկա տեխնիկական կամ կազմակերպչական խնդիրները, ինչպես նաև թափոնների տեսակավորման և վերամշակման համակարգի ներդրման կամ զարգացման ուղղությամբ հնարավորություններ:

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են մի շարք առանցքային ուղղություններ: Առաջին հերթին գնահատվել է համայնքում իրականացվող կանաչ ներդրումների և բնապահպանական նախաձեռնությունների առկայությունը, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրերը, կանաչ տարածքների պահպանման և ընդլայնման միջոցառումները, ինչպես նաև թափոնների վերամշակման և այլ էկոլոգիական նախաձեռնությունների իրականացումը Գավառ համայնքում:

Կարևոր ուղղություն է նաև համայնքի հետաքրքրությունը շրջակա միջավայրի հարցերի նկատմամբ՝ որքանո՞վ են բնակիչները տեղեկացված պլաստիկի սպառման, թափոնների կառավարման և բնապահպանական խնդիրների մասին, և ի՞նչ ակտիվություն են ցուցաբերում դրանց լուծման գործընթացում:

Միաժամանակ ուսումնասիրվել է տեղեկատվության մատչելիությունը, թե արդյոք համայնքում առկա են բավարար իրազեկման միջոցներ, տեղեկատվական արշավներ կամ կրթական ծրագրեր, որոնք օգնում են բնակիչներին ճիշտ վարքագիծ ձևավորել:

Վերջապես, գնահատվել է նաև հաստատությունների և ՏԻՄ մարմինների պատրաստակամությունը հանրության ներգրավվածության հարցում, թե արդյոք նրանք խրախուսում են բնակիչների մասնակցությունը բնապահպանական նախաձեռնություններին և համագործակցում են համայնքի հետ ավելի արդյունավետ լուծումներ գտնելու համար:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվում են Գավառ համայնքում թափոնների կառավարման և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող առկա մոտեցումները, համայնքային նախաձեռնությունները և հրապարակված տվյալները: Որպես տեղեկատվական աղբյուր օգտագործվում են համայնքի վերաբերյալ հրապարակված տվյալներ, ինչպես նաև բնապահպանական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների նյութերը, այդ թվում՝ Հայաստանի ամերիկյանի համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի հրապարակումները:

Գավառ համայնքի թափոնների կառավարման մշակված փաստաթուղթ չկա, սակայն ուսումնասիրվել է Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից կոշտ թափոնների կառավարման թեմայով կատարված հետազոտությունը:

Մոնիթորինգի նախնական փուլում իրականացվել է Գավառ համայնքի 13-35 տարեկան երիտասարդների շրջանում հարցում՝ ներառելով շուրջ 100 երիտասարդի կարծիք և վերաբերմունք բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Հարցման նպատակն էր գնահատել երիտասարդների իրազեկվածության մակարդակը պլաստիկի սպառման, սննդի թափոնների կառավարման և թափոնների տեսակավորման թեմաների շուրջ, ինչպես նաև հասկանալ նրանց հետաքրքրվածությունն ու պատրաստակամությունը բնապահպանական նախաձեռնություններին մասնակցելու հարցում:

Հարցաշարն ընդգրկում էր հետևյալ թեմաները.

- Աղբահանության և աղբամանների հասանելիության գնահատում համայնքում,
- Թափոնների կառավարման և վերամշակման վերաբերյալ իրազեկվածություն,
- Պլաստիկի օգտագործման և դրա վնասների մասին գիտելիքներ,
- Սննդի թափոնների կրճատմանն ուղղված վարքագիծ,
- Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ վերաբերմունք,

- Թափոնների խնդրի լուծման պատասխանատվության ընկալում,
- Անձնական վարքագիծը փոխելու պատրաստակամություն՝ հանուն շրջակա միջավայրի պահպանության,
- Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական տվյալներ (տարիք և այլն):

Հարցման արդյունքների հիման վրա աղբահանության և թափոնների կառավարման վերաբերյալ հետևյալ տվյալներն ունենք՝

Հիմնական արդյունքներ

1. Հարցվածների տարիքային կազմը

- 13-17 տարեկան՝ 52.1% (50 հարցված)
- 18-24 տարեկան՝ 20.8% (20 հարցված)
- 25-30 տարեկան՝ 13.5% (13 հարցված)
- 31-35 տարեկան՝ 13.5% (13 հարցված)

2. Համայնքում աղբամանների բավարար քանակի գնահատում

- Այո՝ 70.8% (68 հոգի)
- Մասամբ՝ 25.0% (24 հոգի)
- Ոչ՝ 4.2% (4 հոգի)

3. Աղբամանների հասանելիության ազդեցությունը վարքագծի վրա

- Այո, զգալիորեն՝ 71.9% (69 հոգի)
- Մասամբ՝ 19.8% (19 հոգի)
- Չի ազդում՝ 8.3% (8 հոգի)

4. Պլաստիկի վնասների վերաբերյալ տեղեկացվածություն

- Մասամբ տեղեկացված՝ 53.1%
- Շատ լավ տեղեկացված՝ 32.3%
- Քիչ տեղեկացված՝ 13.5%
- Ընդհանրապես չտեղեկացված՝ 1.0%

5. Մենդի թափոնների կրճատման փորձ

- Այո, մշտապես՝ 53.1%
- Երբեմն՝ 44.8%
- Ոչ՝ 2.1%

6. Ովքե՞ր են պատասխանատու թափոնների խնդրի լուծման համար

- Բոլորը միասին՝ 55.2%
- Անհատները՝ 21.9%
- Պետությունը՝ 21.9%
- Բիզնեսը՝ 1.0%

7. Շրջակա միջավայրի պահպանման համար վարքագիծ փոխելու պատրաստակամություն

- Շատ պատրաստակամ՝ 64.6%
- Մասամբ պատրաստակամ՝ 13.5%
- Չեն մտածել դրա մասին՝ 20.8%
- Պատրաստ չեն՝ 1.0%

Եզրակացություն

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Գավառ համայնքի երիտասարդների մեծամասնությունը դրական է գնահատում համայնքում աղբամանների առկայությունը, իսկ 72%-ը կարծում է, որ աղբամանների հասանելիությունն ուղղակիորեն ազդում է մաքուր միջավայր պահպանելու վարքագծի վրա: Միաժամանակ հարցվածների ավելի քան կեսը պատրաստ է ակտիվորեն փոխել սեփական վարքագիծը՝ շրջակա միջավայրի պահպանության նպատակով, ինչը վկայում է համայնքում բնապահպանական նախաձեռնությունների իրականացման համար բարենպաստ պայմանների առկայության մասին:

Ստեփանավան համայնքի՝ պլաստիկ և սննդի թափոնների կառավարման ոլորտում փորձի ուսումնասիրություն

Մոնիթորինգի շրջանակում ուսումնասիրվել է Ստեփանավան համայնքի փորձը՝ պլաստիկ և սննդի թափոնների կառավարման ոլորտում: Իրականացվել է հարցազրույց համայնքապետարանի աշխատակցի հետ՝ պարզելու համայնքում իրականացվող ծրագրերը և կիրառվող մեխանիզմները:

Նշվել է, որ թափոնների կառավարման բարելավման աշխատանքները մեկնարկելեն2025թվականին՝«Քաղաքներիէքսպերիմենտալֆոնդ»ծրագրի շրջանակներում: Ծրագրում ներգրավված են եղել համայնքապետարանը, «Կոմունալ ՀՈԱԿ»-ը և երիտասարդական կենտրոնը: Փորձնական փուլում ընտրվել են երկու տարածքներ, որտեղ տեղադրվել է 30 թափոնաման, իսկ բնակիչներին տրամադրվել են 100 հատուկ պարկեր՝ պլաստիկ և թղթե թափոնների առանձին հավաքման համար:

Ծրագրի բյուջեն կազմել է շուրջ 40,000 ԱՄՆ դոլար, որի հիմնական մասը ուղղվել է տեխնիկական միջոցների ձեռքբերմանը՝ վերամբարձ տեխնիկա և պլաստիկի սեղմման սարք: Դրանք հնարավորություն են տալիս հավաքված թափոնները նախապատրաստել վերամշակման և նվազեցնել տեղափոխման ծախսերը: Համայնքապետարանն իր հերթին կատարել է շուրջ 2 միլիոն դրամի ներդրում՝ ձեռք բերելով թափոնամաններ, տեսակավորման պարկեր և կազմակերպելով իրազեկման միջոցառումներ:

Ծրագրի հիմնական գաղափարը «Կանաչ թվային անցումն» է, որի նպատակն է խթանել կայուն զարգացումը և ձևավորել բնակիչների պատասխանատու վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Իրականացվել են վերապատրաստումներ և հանդիպումներ՝ թափոնների տեսակավորման,օրգանականթափոններիկառավարմանևվերամշակման հնարավորությունների վերաբերյալ:

Աշխատանքների արդյունքում մշակվել է հնգամյա ռազմավարություն՝ ուղղված աղբավայրերի կառավարման բարելավմանը, նոր աղբավայրի ստեղծմանևթափոններիքանակինվազեցմանը:Ծրագրիշարունակության շրջանակումհամայնքըստացելէլրացուցիչֆինանսավորումևնախաձեռնել օրգանական թափոններից կենսագազ և հումուս ստանալու ծրագիր, որը համապատասխանում է շրջանաձև տնտեսության սկզբունքներին:

Համայնքը նաև ուսումնասիրել է միջազգային փորձը, մասնավորապես՝ մասնակցելովՍլովակիայումիրականացվածծրագրայինմիջոցառումներին: Փորձի փոխանակումը նպաստել է թափոնների կառավարման ոլորտում նոր մոտեցումների ձևավորմանը:

Հարցազրույցի պահին համայնքում արդեն հավաքվել էր շուրջ 2 տոննա

պլաստիկ թափոն, որը մանրացվել և պատրաստվել էր վերամշակման համար: Ներկայումս իրականացվում էր մասնավոր կազմակերպության ընտրության գործընթաց՝ հավաքված պլաստիկի հետագա իրացման և վերամշակման նպատակով:

Մոնիթորինգի շրջանակում հանդիպում է անցկացվել Գավառ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակից Մկրտիչ Մանուկյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համայնքում առկա բնապահպանական հիմնախնդիրները, դրանց պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև վերջին տարիներին շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ իրականացված միջոցառումները: Մկրտիչ Մանուկյանի խոսքով՝ մինչև նոր աղբամանների տեղադրումը համայնքում առաջացող զգալի քանակությամբ պլաստիկ և սննդային թափոններ հայտնվում էին շրջակա միջավայրում: Եթե սննդային թափոնները հիմնականում ոչնչացվում էին թափառող կենդանիների կողմից, ապա պլաստիկ թափոններն ու պոլիէթիլենային տոպրակները քամու և ջրահոսքերի ազդեցությամբ տեղափոխվում էին դեպի Սևանա լճի ափամերձ անտառապատ տարածքներ՝ առաջացնելով լրացուցիչ բնապահպանական խնդիրներ:

Նրա խոսքով՝ այդ տարածքներում մաքրման աշխատանքների իրականացումը զգալիորեն բարդանում է, քանի որ թափոնները ցրվում են մեծ տարածության վրա, և դրանց ամբողջական հավաքումն ու հեռացումը պահանջում են զգալի մարդկային և նյութական ռեսուրսներ: Չնայած առկա դժվարություններին՝ համայնքը պարբերաբար կազմակերպում է մաքրման աշխատանքներ՝ նպատակ ունենալով նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ոչ օրինական աղբավայրերի խնդրին: Նշվել է, որ նախկինում Գավառ համայնքում ձևավորվել էին բազմաթիվ ինքնաբուխ աղբավայրեր: Թեև ներկայումս դեռևս արձանագրվում են բնակիչների կողմից նման աղբակույտերի առաջացման առանձին դեպքեր, համայնքային իշխանությունները հետևողական միջոցներ են ձեռնարկում դրանց կանխարգելման, հայտնաբերման և վերացման ուղղությամբ:

Ըստ Մկրտիչ Մանուկյանի՝ վերջին տարիներին իրականացված միջոցառումների շնորհիվ հնարավոր է եղել որոշ չափով նվազեցնել բնապահպանական խնդիրների մասշտաբը և բարելավել թափոնների կառավարման համակարգը: Այնուամենայնիվ, առկա մարտահրավերները դեռևս ամբողջությամբ հաղթահարված չեն, և դրանց արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է շարունակական աշխատանք, համայնքի բնակիչների

ակտիվ մասնակցություն և բնապահպանական իրազեկվածության բարձրացում:

Ուսումնասիրական այց «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ՍՊԸ և Հրազդանի սանիտարական աղբավայր

Մոնիթորինգի շրջանակում իրականացվել է ուսումնասիրական այց «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ՍՊԸ, որը կազմակերպում է նշված մարզերի համայնքներից կոշտ կենցաղային թափոնների հավաքումն ու դրանց տեղափոխումը դեպի Հրազդանի սանիտարական աղբավայր:

Այցի ընթացքում ուսումնասիրվել է թափոնների կառավարման ամբողջ գործընթացը՝ սկսած համայնքներում աղբի հավաքումից մինչև դրա վերջնական տեղադրումը: Կազմակերպության մասնագետները ներկայացրել են աղբահանության համակարգի կազմակերպման սկզբունքները, թափոնների հավաքման, տեղափոխման, հաշվառման և վերահսկման մեխանիզմները, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված կիրառվող միջոցառումները:

Այնուհետև իրականացվել է այցելություն Հրազդանի սանիտարական աղբավայր, որի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 25 հեկտար: Ներկայացվել է, որ աղբավայրի կառուցման ընթացքում կիրառվել են ժամանակակից ինժեներական լուծումներ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով: Մասնավորապես, աղբավայրի հիմքում օգտագործվել են հողի և կավի մեկուսիչ շերտեր, որոնք նախատեսված են կանխելու թափոններից առաջացող աղտոտիչ նյութերի ներթափանցումը ստորերկրյա ջրեր:

Ուսումնասիրվել է նաև թափոնների խտացման տեխնոլոգիական գործընթացը: Ներկայացվել է, որ աղբավայրում թափոնները ենթարկվում են բարձր ճնշմամբ սեղմման՝ հատուկ մասնագիտացված տեխնիկայի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել աղբավայրի տարածքը և երկարացնել դրա շահագործման ժամկետը:

Այցի ընթացքում ներկայացվել է նաև աղբավայրում առաջացող գազերի կառավարման համակարգը: Այդ նպատակով տեղադրված են հատուկ գազահեռացման խողովակներ, որոնց միջոցով իրականացվում է գազերի վերահսկվող արտահոսքը՝ նվազեցնելով ինչպես բնապահպանական, այնպես էլ անվտանգության ռիսկերը:

Մասնագետները ներկայացրել են նաև թափոնների վերջնական ծածկման

գործընթացը, որի ընթացքում սեղմված թափոնների վրա պարբերաբար տարածվում են հողի և ավազի շերտեր: Այս մոտեցումը նպաստում է տհաճ հոտերի նվազեցմանը, վնասատուների տարածման կանխարգելմանը և աղբավայրի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը:

Ուսումնասիրվել են նաև աղբատար մեքենաների թվային կառավարման և լոգիստիկ համակարգերը: Աղբահանության ամբողջ գործընթացը վերահսկվում է էլեկտրոնային հարթակի միջոցով, որտեղ գրանցվում են մեքենաների երթուղիները, սպասարկված աղբամանները և կատարված աշխատանքների ծավալները: Բացի այդ, յուրաքանչյուր աղբատար մեքենա աղբավայր մուտք գործելիս անցնում է կշռման փուլ, ինչի արդյունքում հաշվառվում է յուրաքանչյուր համայնքից հավաքված թափոնների ճշգրիտ քանակը: Այս տվյալներն օգտագործվում են ինչպես օպերատիվ կառավարման, այնպես էլ վիճակագրական և ֆինանսական հաշվառման նպատակներով:

Ուսումնասիրական այցը հնարավորություն տվեց գնահատելու Հայաստանում գործող ժամանակակից սանիտարական աղբավայրի աշխատանքային գործընթացները, ծանոթանալու կոշտ կենցաղային թափոնների կառավարման ամբողջշղթային և հասկանալու ժամանակակից տեխնոլոգիաների դերը շրջակա միջավայրի պահպանության և թափոնների արդյունավետ կառավարման գործում:

Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ-ներ կատարած այցի շրջանակում տեղի ունեցավ հանդիպում, որի ընթացքում քննարկվեցին թափոնների կառավարման և աղբահանության ոլորտում առկա խնդիրներն ու զարգացման հեռանկարները:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց, որ առաջիկայում նախատեսվում է իրականացնել տեսակավորված աղբի հավաքում այն համայնքներում, որտեղ արդեն գործում է աղբահանության ծառայությունը: Նշվեց, որ ներկայումս ընդհանուր կենցաղային աղբի միջից պլաստիկ թափոնների առանձնացումը գործնականում դժվար է՝ աղբի մեծածավալ քանակի և չտեսակավորված հավաքման պատճառով: Այդ իսկ պատճառով նախատեսվում է անցում կատարել աղբի սկզբնական տեսակավորմանը՝ ստեղծելով վերամշակման ենթակա թափոնների առանձին հավաքման համակարգ:

Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ ծրագրի իրականացումը կնպաստի թափոնների արդյունավետ կառավարմանը, վերամշակման ծավալների ավելացմանը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը:

Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) օրենսդրական նախաձեռնության ուսումնասիրություն

Մոնիթորինգի շրջանակում ուսումնասիրվել են նաև պլաստիկ և սննդի թափոնների կառավարման ոլորտում նախատեսվող օրենսդրական փոփոխությունները: Այդ նպատակով թիմի անդամները մասնակցել են Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպված՝ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) համակարգի ներդրմանը նվիրված շահառուների հանդիպմանը, որի ընթացքում ներկայացվել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հանդիպմանը մասնակցել են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և ոլորտի այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ:

Ներկայացված օրենսդրական նախաձեռնության նպատակն է ձևավորել առավել արդյունավետ և կայուն թափոնների կառավարման համակարգ, որի շրջանակում արտադրողներն ու ներմուծողները պատասխանատվություն են կրելու իրենց արտադրանքի օգտագործումից հետո առաջացող թափոնների հավաքման, տեսակավորման, վերամշակման և անվտանգ կառավարման համար:

Մոնիթորինգի թեմայի տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն պլաստիկ և օրգանական (սննդի) թափոնների կառավարմանը վերաբերող դրույթները: Նախագծով նախատեսվում է ներդնել տեսակավորված հավաքման համակարգ, ինչը հնարավորություն կտա վերամշակման ենթակա նյութերն առանձնացնել արդեն սկզբնաղբյուրում և զգալիորեն նվազեցնել ընդհանուր աղբային հոսքը: Միաժամանակ նախատեսվում է ներդնել վերադարձի (դեպոզիտային) համակարգեր, որոնց միջոցով քաղաքացիները կկարողանան վերադարձնել օգտագործված փաթեթավորումները և պլաստիկ տարաները:

Օրենսդրական նախագիծը հիմնված է շրջանաձև տնտեսության սկզբունքների վրա, որոնց համաձայն նյութերն ու հումքը պետք է հնարավորինս երկար մնան տնտեսական շրջանառության մեջ՝ կրկնակի օգտագործման և վերամշակման միջոցով: Նախագծով նախատեսվում է նաև նվազեցնել աղբավայրեր տեղափոխվող թափոնների ծավալը, խթանել երկրորդային հումքի օգտագործումը և զարգացնել արտադրողների պատասխանատվության կազմակերպությունների (ԱՊԿ) կողմից թափոնների հավաքման, տեսակավորման, փոխադրման և վերամշակման ենթակառուցվածքները:

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հրազդանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման կենտրոնի դերին: Նշվել է, որ

այն չի դիտարկվում որպես սովորական աղբավայր, այլ հանդիսանում է ժամանակակից թափոնների կառավարման կենտրոն, որտեղ հնարավոր է տեսակավորված թափոնների առանձնացումը և դրանց հետագա փոխանցումը վերամշակող կազմակերպություններին:

Ներկայացված օրենսդրական փոփոխությունները կարևոր նշանակություն ունեն նաև Գավառ համայնքի համար, քանի որ ԱԸՊ համակարգի ներդրումը կարող է նպաստել թափոնների տեսակավորման մշակույթի ձևավորմանը, վերամշակվող նյութերի ծավալի ավելացմանը, աղբավայր տեղափոխվող թափոնների կրճատմանը և համայնքային մակարդակում ավելի արդյունավետ ու կայուն թափոնների կառավարման համակարգի ձևավորմանը:

Նախագծի համաձայն՝ «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը նախատեսվում է ուժի մեջ մտցնել 2028 թվականից:

Քաղաքացիների և երիտասարդների մասնակցությունը

Մոնիթորինգի շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների կարծիքի և մասնակցության կարևորությանը: Այդ նպատակով Գավառ համայնքի 13-35 տարեկան շուրջ 100 երիտասարդների շրջանում իրականացվել է հարցում, որի միջոցով փորձ է արվել հասկանալ, թե որքանով են երիտասարդները հետաքրքրված շրջակա միջավայրի պահպանության հարցերով, ինչ վերաբերմունք ունեն պլաստիկի սպառման և թափոնների կառավարման նկատմամբ, ինչպես նաև ինչպիսի փոփոխություններ են կարևորում համայնքում:

Բացի այդ, ուսումնասիրվում են նաև առցանց հարթակների և թվային գործիքների հնարավորությունները՝ բնապահպանական իրազեկվածության բարձրացման, հանրային քննարկումների կազմակերպման և համայնքի ներգրավվածության ընդլայնման նպատակով: Այս ուղղությամբ իրականացվող ուսումնասիրությունները նպատակ ունեն հասկանալու, թե ինչպիսի ժամանակակից մեխանիզմներ կարող են արդյունավետ կիրառվել համայնքում բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային մասնակցությունն ու տեղեկատվության հասանելիությունը մեծացնելու համար:

Եզրակացություն

Իրականացված քաղաքացիական մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ Գավառ համայնքում թափոնների կառավարման ոլորտում վերջին տարիներին արձանագրվել են որոշ դրական փոփոխություններ: Աղբահանության ծառայության բարելավման, նոր աղբամանների տեղադրման և համայնքային կառույցների կողմից իրականացվող

աշխատանքների շնորհիվ նվազել են չկառավարվող աղբակույտերի քանակը և բարելավվել է համայնքի սանիտարահիգիենիկ վիճակը:

Միևնույն ժամանակ, մոնիթորինգը բացահայտեց, որ Գավառ համայնքում դեռևս բացակայում է թափոնների տեսակավորման և վերամշակման ամբողջական համակարգը: Պլաստիկ և սննդային թափոնները հիմնականում հավաքվում և տեղափոխվում են ընդհանուր աղբային հոսքով, ինչի հետևանքով սահմանափակվում են դրանց վերամշակման և կրկնակի օգտագործման հնարավորությունները: Սա շարունակում է մնալ համայնքի բնապահպանական հիմնական մարտահրավերներից մեկը:

Հարցումների, հանդիպումների և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Գավառ համայնքի երիտասարդներն ու բնակիչները հիմնականում դրական վերաբերմունք ունեն շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ: Երիտասարդների մեծ մասը պատրաստակամություն է հայտնել փոխելու սեփական վարքագիծը, նվազեցնելու պլաստիկի օգտագործումը և մասնակցելու բնապահպանական նախաձեռնություններին: Սա կարևոր ներուժ է համայնքում էկոլոգիական մշակույթի ձևավորման և երկարաժամկետ փոփոխությունների իրականացման համար:

Մոնիթորինգի ընթացքում իրականացված հանդիպումները համայնքապետարանի, «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային մասնագետների հետ ցույց տվեցին, որ թափոնների կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ առկա են որոշ ծրագրեր և նախաձեռնություններ: Մասնավորապես, քննարկվում է տեսակավորված աղբի հավաքման համակարգի ներդրման հնարավորությունը, ինչը կարող է կարևոր քայլ լինել Գավառ համայնքում պլաստիկ թափոնների վերամշակման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման տեսանկյունից:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Գավառ համայնքը գտնվում է թափոնների կառավարման համակարգի զարգացման կարևոր փուլում: Համայնքում արդեն ստեղծվել են որոշակի հիմքեր՝ ավելի արդյունավետ և ժամանակակից մոտեցումներ ներդնելու համար, սակայն անհրաժեշտ են լրացուցիչ քայլեր՝ տեսակավորման ենթակառուցվածքների զարգացման, բնակչության իրազեկվածության բարձրացման և վերամշակման հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ: Համայնքային կառույցների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և երիտասարդների համագործակցությունը կարող է դառնալ այն կարևոր գործոնը, որը կնպաստի Գավառ համայնքում ավելի մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի ձևավորմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

- Աջակցել թափոնների տեսակավորման համակարգի աստիճանական ներդրմանը Գավառ համայնքում՝ հանրային վայրերում և հաստատություններում համապատասխան տեսակավորման աղբամանների տեղադրման միջոցով:
- Իրականացնել պարբերական իրազեկման արշավներ և կրթական միջոցառումներ բնակիչների, հատկապես երիտասարդների շրջանում՝ պլաստիկի սպառման նվազեցման և սննդի թափոնների ճիշտ կառավարման թեմաներով:
- Խթանել համայնքի և մասնավոր հատվածի համագործակցությունը վերամշակման և կանաչ նախաձեռնությունների զարգացման ուղղությամբ:
- Ապահովել բնապահպանական թեմաների վերաբերյալ տեղեկատվության առավել մատչելի և բաց տարածում՝ համայնքային կայքերի, սոցիալական հարթակների և հանրային քննարկումների միջոցով:
- Աջակցել երիտասարդների և համայնքային խմբերի ներգրավվածությանը բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում, այդ թվում՝ հնարավորություն ստեղծելով մասնակցելու ավագանու նիստերին և հանրային քննարկումներին:
- Ուսումնասիրել այլ համայնքների հաջողված փորձը և հնարավորության դեպքում կիրառել արդյունավետ մեխանիզմներ Գավառ համայնքում՝ թափոնների կառավարման համակարգի բարելավման նպատակով:
- Քննարկել համայնքում վերամշակման կետերի կամ պլաստիկի առանձին հավաքման համակարգի ներդրման հնարավորությունները՝ երկարաժամկետ բնապահպանական արդյունքներ ապահովելու համար:

Հայաստանի Ծիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի հինգ համայնքներում իրականացված քաղաքացիական մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ բնապահպանական խնդիրները, չնայած իրենց տարբեր բնույթին, ունեն մի շարք ընդհանուր պատճառներ և մարտահրավերներ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ համայնքներում առկա են ինչպես աղբահանության և թափոնների կառավարման, այնպես էլ կանաչ տարածքների պահպանության, օդի աղտոտվածության, անտառների պահպանության և վերականգնման հետ կապված համակարգային խնդիրներ: Մի շարք համայնքներում իրականացվում են բնապահպանական ծրագրեր և կանաչ ներդրումներ, սակայն դրանց ազդեցությունը հաճախ սահմանափակվում է ֆինանսական, կազմակերպչական կամ մարդկային ռեսուրսների պակասի պատճառով:

Մոնիթորինգը ցույց է տալիս, որ համայնքների բնակիչները, հատկապես երիտասարդները, բարձր հետաքրքրվածություն ունեն շրջակա միջավայրի պահպանության հարցերով և պատրաստակամ են մասնակցելու բնապահպանական նախաձեռնություններին: Միաժամանակ նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին դեռևս սահմանափակ է, իսկ հանրային խորհրդակցությունների և մասնակցային կառավարման մեխանիզմները բավարար չափով զարգացած չեն:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են նաև, որ բնապահպանական ծրագրերի, համայնքային ներդրումների և իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի և թափանցիկ է հանրության համար: Սա սահմանափակում է քաղաքացիների մասնակցությունը և նվազեցնում հանրային վստահությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

Մոնիթորինգի ընթացքում արձանագրվել է, որ մի շարք բնապահպանական խնդիրներ պայմանավորված են ոչ միայն ենթակառուցվածքային կամ ֆինանսական սահմանափակումներով, այլև բնակչության իրազեկվածության, բնապահպանական վարքագծի և պատասխանատու սպառման մշակույթի դեռևս անբավարար մակարդակով: Հատկապես թափոնների կառավարման ոլորտում ակնհայտ է աղբի տեսակավորման, վերամշակման և շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման անհրաժեշտությունը:

Միաժամանակ արձանագրվել են նաև դրական զարգացումներ: Համայնքներում իրականացվում են կանաչապատման, աղբահանության, ենթակառուցվածքների բարելավման և թափոնների կառավարման ուղղությամբ ծրագրեր, իսկ ազգային մակարդակում մշակվող օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես՝ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) համակարգի ներդրումը, կարող են էական խթան հանդիսանալ Հայաստանի թափոնների կառավարման համակարգի բարելավման համար:

Ընդհանուր առմամբ, մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ համայնքներում առկա է բնապահպանական քաղաքականությունների զարգացման հիմք, սակայն դրանց արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ապահովել պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և քաղաքացիների միջև առավել համակարգված և շարունակական համագործակցություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա առաջարկվում է՝

1. **Ուժեղացնել համայնքային բնապահպանական քաղաքականությունները՝** մշակելով հստակ գործողությունների ծրագրեր, չափելի ցուցանիշներ և պարբերական գնահատման մեխանիզմներ:
2. **Բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝** համայնքների պաշտոնական կայքերում և սոցիալական հարթակներում պարբերաբար հրապարակելով բնապահպանական ծրագրերի, ներդրումների, բյուջեների և իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
3. **Ապահովել քաղաքացիների, հատկապես երիտասարդների, մասնակցությունը** բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում՝ կազմակերպելով հանրային քննարկումներ, խորհրդակցություններ, կամավորական ծրագրեր և երիտասարդական խորհրդատվական հարթակներ:
4. **Զարգացնել թափոնների կառավարման համակարգը՝** աստիճանաբար ներդնելով աղբի տեսակավորված հավաքումը, վերամշակման ենթակառուցվածքները և շրջանաձև տնտեսության սկզբունքները՝ համահունչ Արտադրողի ընդլայնված

պատասխանատվության (ԱԸՊ) համակարգի ներդրմանը:

5. **Ընդլայնել կանաչ ներդրումները՝** առաջնահերթություն տալով կանաչ տարածքների պահպանմանը, նոր ծառատունկերին, անտառվերականգնման ծրագրերին և քաղաքային էկոհամակարգերի զարգացմանը:
6. **Ուժեղացնել բնապահպանական կրթությունն ու իրազեկումը՝** դպրոցներում, երիտասարդական կենտրոններում և համայնքներում պարբերաբար կազմակերպելով կրթական, տեղեկատվական և գործնական միջոցառումներ՝ ուղղված պատասխանատու սպառման, թափոնների տեսակավորման և շրջակա միջավայրի պահպանության մշակույթի ձևավորմանը:
7. **Ներդնել ժամանակակից թվային գործիքներ՝** բնապահպանական խնդիրների մասին քաղաքացիների ահազանգերի, առաջարկությունների և հանրային մասնակցության ապահովման համար:
8. **Ամրապնդել միջգերատեսչական և միջհամայնքային համագործակցությունը**, որպեսզի հաջողված փորձը, նորարարական լուծումները և արդյունավետ ծրագրերը կիրառվեն նաև Հայաստանի այլ համայնքներում:
9. **Աջակցել քաղաքացիական մոնիթորինգի շարունակական իրականացմանը**, քանի որ այն նպաստում է հանրային վերահսկողության, տվյալահեն որոշումների կայացման, պետական և համայնքային կառավարման հաշվետվողականության բարձրացմանը:
10. **Ապահովել բնապահպանական քաղաքականությունների շարունակական գնահատումը՝** պարբերաբար իրականացնելով հանրային մոնիթորինգ, հրապարակելով արդյունքները և կիրառելով դրանք համայնքային ու պետական քաղաքականությունների բարելավման համար:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձեկույց 1. Արթիկի անտառային գոտու աղբահանության խնդիրը

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ https://env.am
2. Հայանտառ ՊՈԱԿ՝ https://hayantar.am
3. Արթիկի համայնքապետարան՝ https://artik.am/
4. Կլիմայի կայուն զարգացում բնապահպանական ՀԿ՝ https://www.facebook.com/profile.php?id=100082913243556
5. Արթիկի անտառ՝ https://www.shantnews.am/news/view/248944.html?utm_source=chatgpt.com
6. Տեղանքի դիտարկման և լուսանկարահանման արդյունքներ
7. «Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, գիտագործնական կոնֆերանսի նյութեր», հուլիս, 2001թ, ք. Արթիկ
8. «Շիրակի կլիման և ջրերը, Երևան 2005», Բորիս Մնացականյան, Աշոտ Աջամօղլյան
9. «Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի քաղաքամերձ տարածքի 5 ՀԱ կուլտուրաների վերականգնում, Երևան 2006

Ձեկույց 2. Շիրակի մարզի անտառածածկ տարածքները

1. «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար https://www.ebrdgreencities.com/assets/Uploads/PDF/Gyumri-GCAP_Arm.pdf
2. Անտառային կոմիտե «Հայ անտառ» ՊՈԱԿ «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032 թթ. կառավարման պլան https://env.am/storage/files/gyumri-karavarman-plan.pdf
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2017-2025 թթ տարածքային զարգացման ռազմավարություն http://shirak.mtad.am/u_files/file/1579.pdf
4. Գյումրիում շինարարությանը խանգարող 51 ծառի հատվելու հարցի քննարկումը ռեպորտաժ https://www.azatutyun.am/a/32950237.html
5. «Շիրակի մարզի բնապահպանական խնդիրները» ռեպորտաժ https://www.youtube.com/watch?v=-10GKCecw7E
6. ԷկոԼուր https://www.ecolur.org/hy/news/forest/5856/
7. https://jam-news.net/ru
8. https://arar.sci.am/Content/381116/221.pdf

Զեկույց 4. Օդի աղտոտվածությունը Վաղարշապատ համայնքում

1. World Health Organization, Air pollution, https://www.who.int/health-topics/air-pollution#tab=tab_2 (02.06.2026)\
2. The National Institute of Environmental Health Sciences, Air Pollution and Your Health, https://www.niehs.nih.gov/health/topics/agents/air-pollution (02.06.2026)
3. World Health Organization, Ambient (outdoor) air pollution, https://www.who.int/news-room/fact-sheets/detail/ambient-(outdoor)-air-quality-and-health (02.06.2026)
4. «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-սթկ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 160-Ն որոշում, հաստատվել է 2006 թվականի փետրվարի 2-ին, https://www.arlis.am/en/acts/73837
5. World Health Organization, Air pollution, https://www.who.int/health-topics/air-pollution#tab=tab_2 (02.06.2026)
6. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն», Ի՞նչ է փոշին կամ կախված մասնիկները, https://armmonitoring.am/post/736 (02.06.2026)
7. ՀՀ Հաշվեքննիչ պալատ, «Օդի աղտոտվածության նվազեցում», Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի ապրիլի 15-ի N 27-Ա որոշմամբ, էջ 8, https://armsai.am/sites/default/files/program/2025/Report%2027A%202025.pdf (02.06.2026)
8. ՀՀ Հաշվեքննիչ պալատ, «Օդի աղտոտվածության նվազեցում», Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի ապրիլի 15-ի N 27-Ա որոշմամբ, էջ 10, https://armsai.am/sites/default/files/program/2025/Report%2027A%202025.pdf
9. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն https://www.who.int/health-topics/air-pollution#tab=tab_1
10. National Institute of Environmental Health Sciences https://www.niehs.nih.gov/health/topics/agents/air-pollution?utm
11. Community Health https://www.chcrr.org/hy/health-topic/air-pollution/
12. Air Quality Index (AQI) https://www.airnow.gov/aqi/aqi-basics/?utm_
13. Օդի աղտոտվածության նվազեցում https://armsai.am/sites/default/files/program/2025/Report%2027A%202025.pdf?
14. Հայաստանի Հանրապետության օրենքը Մթնոլորտային օդի պահպանության մասին https://www.arlis.am/hy/acts/172207?utm_
15. Ա1+, Օդի աղտոտվածության հետևանքով Հայաստանում յուրաքանչյուր տարի մահանում է շուրջ 51 մարդ https://a1plus.am/hy/article/438773

Զեկույց 5. Գավառում պլաստիկի սպառում և սննդի թափոնների մշակում

1. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն https://ace.aua.am/hy/about/
2. Ստեփանավանի համայնքապետարան https://stepanavan.am/Pages/Home/Default.aspx
3. «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ https://www.facebook.com/p/%D4%BF%D5%B8%D5%BF%D5%A1%D5%B5%D6%84%D5%AB-%D6%87-%D4%B3%D5%A5%D5%B2%D5%A1%D6%80%D6%84%D5%B8%D6%82%D5%B6%5%AB%D6%84%D5%AB-%D4%BF%D4%BF%D4%B9%D4%BF-61572531476502/
4. «Թափոնների կառավարումը Հայաստանում» 2020 թվականի զեկույց https://ace.aua.am/wp-content/uploads/2020/08/WGA-Report-Arm.pdf
5. Արտադրողի Ընդլայնված պատասխանատվության մասին օրենքի նախագիծ https://www.e-draft.am/projects/10266/about?utm_id=97757_v0_s00_e0_tv2_a1demo0g6ob6ye&fbclid=IwY2xjawSjxshleHRuA2FlbQIxMABicmlkETE5NUlzQzAxRDlVbm5IdWFYc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHsqO_IGAM6mr2bE3ZdGRzaaogdAZRG9jM1MOLmdoceHLZk5vKALmS903d_h7_aem_-zVjLDx61lYQ-r_ynSW70Q

Co-funded by the European Union

YOUTH INITIATIVE CENTRE

Հայաստանի Շիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի բնապահպանական խնդիրների երիտասարդական քաղաքացիական մոնիթորինգ

© 2026 «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ